# Ազգ

Azg

24 ՓԵՏՐՈՒԱՐ 2012 ՈՒՐԲԱԹ 34(4886)

ISSN: 1829-1651


## Թշնամու գնդակից զինվոր է զոհվել

Տավուշի մարզի Չինարի գյուղի ուղղությամբ տեղակայված մարտական հենակետում ծառայողական պարտականությունները կատարելիս Ադրբեջանի զինված ուժերի դիպուկահարի արձակած գնդակից գլխի շրջանում հրազենային վիրավորում է ստացել եւ զոհվել ԶՈՒ ժամկետային զինծառայող 20-ամյա Ալբերտ Աղիբեկյանը: Պաշտպանության նախարարությունից հավաստիացնում են, որ ադրբեջանցի դիպուկահարների սադրանքը կստանա իր պատասխանն ու Ադրբեջանի զինված ուժերի հրամանատարական կազմը ստիպված է լինելու պատասխանատվություն ստանձնել իր գործողությունների համար:

## Իսրայելը հազիվ թե հարձակվի Իրանի վրա

*Սակայն հարձակման «վճռականությամբ» կարող է Ասադի վարչակարգի դատապարտվածության պատրանք ստեղծել*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Որքան Սիրիայում սրվում է ներքաղաքական լարվածությունը, այնքան աշխուժանում են Իրանի վրա Իսրայելի հարձակման հարցի վերարծարծումները: Այդ ընթացքում արեւմտյան տերությունները Բաշար Ասադի վարչակարգին աջակցելու պատճառաբանությամբ շարունակում են քննադատել Ռուսաստանին ու Չինաստանին:

Հիրավի, Ռուսաստանի եւ Չինաստանի դիմադրության պատճառով ԱՄՆ-ին ու նրա դաշնակիցներին չի հաջողվում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում Սիրիայի դեմ պատժամիջոցներ կիրառելու որոշում ընդունել, նույնիսկ որոշմամբ դատապարտել սիրիական իշխանություններին: Այս պայմաններում նրանք գործի են դնում ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային, որքան էլ վերջինի որոշումը պարտավորեցնող չլինի, պատժամիջոցների հարցում օգտվում են Արաբական լիգայի ծառայություններից եւ հաշվարկներ են անում, որ խռովարարների համար հենակետի վերածված Թուրքիային օգտագործեն որպես ռազմական միջամտության գործիք ընդդեմ Սիրիայի:

Թերեւս այդ առումով պատահական չէ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուին երեկ Լոնդոնում արած հայտարարությունը. «Սիրիայի ճգնաժամի կարգավորմանը նպաստելու, սիրիացի փախստականներին օժանդակելու եւ ապաստան տրամադրելու համար բարձր եմ գնահատում Թուրքիային»:

*Տես էջ 5*

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏՈՒՄ

## Գույքահարկի եւ հողի հարկի ապառքներն ու տույժ տուգանքները կներվեն

*Խոսքը կուտակված շուրջ 43 մլրդ դրամի մասին է*

**Մի քանի օրենքներում կատարած փոփոխություններով, որոնք երեկ հավանության արժանացան կառավարության կողմից, առաջարկվում է հողի հարկ եւ գույքահարկ վճարող անձանց որոշակի ժամանակահատվածում եւ որոշակի չափով ազատել չվճարված գույքահարկից եւ հողի հարկից, հաշվարկված տույժերից եւ տուգանքներից: Այս հարցին անդրադառնալով, վարչապետ Տիգրան Սարգսյանն ասաց, որ մարզային այցելությունների ժամանակ գյուղացիները այս հարցը մշտապես բարձրացնում են, ավելացնելով այն փաստարկը, որ ճգնաժամային տարիները լուրջ բարդություններ են ստեղծել հարկային պարտավորությունների կատարման առումով: «Պետությունն այսպիսի նախաձեռնությամբ հանդես գալով՝ շուրջ 43 մլրդ դրամի հարկեր է զիջում գյուղատնտեսության ոլորտում: Կարծում եմ՝ սա իր մեջ լուրջ ներուժ է պարունակելու նաեւ տնտեսական աճի խթանման առումով, որովհետեւ գյուղատնտեսության հարկային բեռն էապես նվազելու է», նշեց նա:**

**Որոշման մանրամասները լրագրողներին ներկայացրեց տարածքային կառավարման փոխնախարար Վաչե Տերտերյանը: Նա հայտնեց, որ խոսքը վերաբերում է 1996-2012 թվականների ընթացքում գույքահարկի եւ հողի հարկի գծով չվճարումներին եւ դրանց հետեւանքով առաջացած տույժ-տուգանքներին: Դրանց մեծ մասը՝ 70-80 տոկոսը, մինչեւ 2008-ը կուտակված ապառքներն են, որովհետեւ, ըստ փոխնախարարի, վերջին տարիներին տեղական հարկերի հավաքման ցուցանիշը կազմում է 90-95 տոկոս: Մինչեւ 2008-ը եղած բոլոր ապառքները ամբողջությամբ ներվում են, իսկ դրանից հետո եղածների տույժ-տուգանքներն են ներվում, եթե մայր գումարները վճարվեն: Ընդ որում, հնարավորություն է տրված նաեւ վճարումները կատարել ըստ փոխհամաձայնեցված ժամանակացույցի՝ 6 կամ 12 ամսվա ընթացքում: Այս հնարավորությունից կարելի է օգտվել մինչեւ այս տարվա վերջ:**

**Վաչե Տերտերյանը տեղեկացրեց, որ հողի հարկի մասով կուտակվել է 14,6 մլրդ դրամ ապառք եւ 9,7 մլրդ դրամ տույժ-տուգանք, գույքահարկի մասով՝ 11,6 մլրդ դրամ ապառք եւ 6,7 մլրդ դրամ տույժ-տուգանք:**

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ




## Երեւանցիներին անհրաժեշտ են և՛ Աբովյան փողոցը, և՛ Մաշտոցի այգին

*Հանրային խորհուրդը պահանջում է դադարեցնել այգու կառուցապատումը*



ՖՈՏՈԼՈՒՐ

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հանրային խորհրդում Մաշտոցի այգու իրավիճակի վերաբերյալ հրավիրված քննարկմանը մայրաքաղաքի գլխավոր ճարտարապետ **Նարեկ Սարգսյանը** եկել էր մայրաքաղաքի կառուցապատման նախագծերի մի շարք պաստառներով՝ պաշտպանելու Մաշտոցի այգում կրպակների տեղադրման գաղափարը: Մինչդեռ ճարտարապետը մի քանի անգամ հակասեց ինքն իրեն եւ որեւէ էական, սպառիչ պատասխան չտվեց հարցերին:

Սարգսյանի ներկայացմամբ՝ Աբովյան փողոցից ապամոնտաժված կրպակների վարձակալության պայմանագրի ժամկետը չի ավարտվել, հետեւաբար նրանց պետք էր փոխհատուցում տալ:

Քաղաքապետարանի իրավաբանական վարչության պետ **Զավեն Առաքելյանը** սկզբում ասաց, որ մոնտաժված կրպակները 7-10 տարվա պայմանագիր ունեն, հետո, ինքն իրեն հակասելով, ասաց, որ կրպակները 5-7 տարվա պայմանագիր ունեն: Մինչդեռ **Վազգեն Մանուկյանը** մայրաքաղաքի կրպակների ու մասնավորապես Աբովյան փողոցի կրպակների պայմանագրերի ժամկետների վերաբերյալ բոլորովին այլ տեղեկություն ունի: Երբ անցյալ տարի մայրաքաղաքում ավելի քան 1000 կրպակ է ապամոնտաժվել, Մանուկյանը զանգել է նախկին քաղաքապետ Կարեն Կարապետյանին: Վերջինս նրան հավաստիացրել է՝ ապամոնտաժում են միայն լքված եւ վարձակալության պայմանագրի ժամկետը լրացած կրպակները: «Իսկ ի՞նչ է լինելու Աբովյան փողոցի կրպակների հետ, հարցրեցի ես, Կարեն Կարապետյանն էլ ասաց, որ այդ կրպակների վարձակալության ժամկետը 2-3 ամսից լրանալու է եւ այդ կրպակները նույնպես ապամոնտաժվելու են»: Թե ինչպես է ստացվել, որ 2-3 ամիսը դարձել է 7-10 տարի, ոչ ոք չի կարողանում պատասխանել:

*Տես էջ 2*

## Վաղվա «Ազգ. Հասարակական-պատմագիտական» հավելված-ներդիրում

Մաքսիմ Ոսկանյանի դիտարկումները Հայաստան մտած նոր աղանդի ու նրա վտանգների շուրջը:

Ռոմիկ Հովնանյանը կշարունակի հետաքրքրական մանրամասներ ներկայացնել «Նեմեսիս» գործողության մասին, որի ընթացքում հայ վրիժառուները մահվամբ պատժեցին հայ ժողովրդի դահիճներից 7-ին, թեեւ նախապես ծրագրված էր գնդակահարել 41-ին:

ՀՑԹ-ի տնօրեն Հայկ Դեմոյանը բանավիճային հոդվածում կպատասխանի իր մասին նախապես «**Ազգի**» նույն էջերում տպագրված Գեւորգ Յազըճյանի հոդվածին:

Պատմագիտական խիստ հետաքրքրական ակնարկ 1906-1917 թվականներին Ռուսական կայսրության պետդումայի հայազգի 14 պատգամավորների վերաբերյալ՝ նկարներով ու կենսագրական հակիրճ տվյալներով:

## ԵԱՀԿ գործող նախագահ. «Ոչ մի խնդիր չի կարող լուծվել, քանի դեռ չկա հակամարտության մեջ ուղղակիորեն ընդգրկված կողմերի իրական կամքը»

**ԵԱՀԿ-ում նախագահող Իռլանդիան էլ, իր նախորդների նման, նախագահությունը ստանձնելուն պես հայտարարեց, թե հակամարտությունների հարցում ջանք չի խնայի՝ ներդնելով նաեւ իռլանդական փորձը: «Մեդիամաքս» գործակալությանը տված հարցազրույցում ԵԱՀԿ գործող նախագահ, Իռլանդիայի փոխվարչապետ, արտգործնախարար Էյմոն Գիլմորը հավաստիացրել է, թե Իռլանդիան հանդես է գալու ազնիվ միջնորդի դերում:**

**«Ես չեմ դիտարկում ստատուս քվոն որպես կենսունակ երկարաժամկետ լուծում», ասել է Գիլմորը, հստակ պատասխան չտալով ոչ դիպուկահարների հեռացման գործում Ադրբեջանին համոզելու հարցին, բայց աջակցություն հայտնելով «հրադադարի ռեժիմի պահպանման նպատակով կողմերի հետ աշխատող ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերին»:**

**Գիլմորը հանդես է գալիս 2011-ին Սոչիում նախագահների ձեռք բերած՝ միջադեպերի հետաքննության մեխանիզմի վերաբերյալ համաձայնության իրականացման օգտին, սակայն գտնում է, որ որեւէ մեկը չի կարող նպաստել դրա իրականացմանը, «մինչեւ կողմերն իրենք ջանքեր չգործադրեն այդ ուղղությամբ»: «Ոչ մի խնդիր չի կարող լուծվել, քանի դեռ չկա հակամարտության մեջ ուղղակիորեն ընդգրկված կողմերի իրական կամքը, քանի դեռ կողմերը պատրաստ չեն անխուսափելի կորուստների եւ փոխզիջումների: Իռլանդիան եւ միջազգային հանրությունը կարող են միայն հարթակ տրամադրել եւ աջակցել կողմերին՝ երկարաժամկետ խաղաղության ուղղված իրենց պարտավորություններում», ասել է Իռլանդիայի ԱԳ նախարարը:**

**Որեւէ այլ ատյան բանակցությունները տեղափոխելու առնչությամբ իռլանդացի դիվանագետն ուղղակի պատասխան չի տվել, բայց ամեն կերպ շեշտել է, որ Իռլանդիան աջակցում է առկա գործընթացներին ու ձեւաչափերին: Իսկ իռլանդական փորձի կիրառելիության առումով Գիլմորը նշել է. «Մենք չենք առաջարկում պատրաստի մոդել եւ պատճեններ: Ամեն մի հակամարտային իրավիճակ տարբեր է, ունի իր խնդիրներն ու դինամիկան... Շատերը Հյուսիսային Իռլանդիայի հակամարտությունը նույնպես համարում էին «անլուծելի», սակայն մեզ հաջողվեց հասնել երկարաժամկետ խաղաղության: Այս նվաճումը հնարավոր դարձավ բանակցությունների եւ փոխզիջումների, Իռլանդիայի եւ Բրիտանիայի կառավարությունների, ինչպես նաեւ երկու կողմերի առաջնորդների նվիրվածության եւ տեսլականի շնորհիվ»:**

**Գիլմորը եւս մեկ անգամ հավաստել է, որ պատրաստվում է ապրիլի 27-ին Դուբլինում կոնֆերանս հրավիրել՝ քննարկելու հակամարտությունները: Իսկ մինչ այդ՝ նույն ապրիլին Գիլմորը հավանաբար կայցելի Հարավային Կովկաս:**

Ա. Հ.

# Գուլուզադեն գոնե սպիտակ մազերից ամաչեր

Ադրբեջանցիների մեջ սովորություն կա. երբ տարիքն առած մարդն է ստախոսում, ամոթանք են տալիս. «Գոնե սպիտակ մազերիցդ ամաչեիր, ա՛յ փոփակ»: Հիմա Վաֆա Գուլուզադեն է՝ տարիքն անցկացրել, ճերմակ մազմորուքով «ֆիշի» է, բայց ակնհայտ ստեր է տիրաժավորում: Անցած շաբաթ Բաքվի մերձակա գյուղերում, բայց հատկապես՝ Նարդարանում, որ համարվում է «իսլամականության միջնաբերդ», Ադրբեջանի ԱԱ եւ ՆԳ նախարարությունները տասնյակ անձանց են ձերբակալել: Երբեմն՝ «թմրանյութ պահելու եւ իրացնելու», նաեւ՝ «ապօրինի զենք-զինամթերք շրջանառելու մեղադրանքով», իսկ ավելի հաճախ՝ առանց որեւէ հիմնավորման եւ բացատրության:

Նման «պրոֆիլակտիկա» իշխանությունները միշտ էին անում: Խնդիրն այսօր հրատապ է դառնում Իրանի հանդեպ արեւմտյան դաշինքի նկատառումների եւ հավանական ծրագրերի համատեքստում: Տպավորություն է ստեղծվում, որ Իլհամ Ալիեւի վարչակարգն Ադրբեջանում հակաիրանական գործողությունների «հարթակ է նախապատրաստում»: Սա այնքան ակնհայտ ծրագիր է, որ Բաքվում ստիպված են «ոգեկոչել» հին ու նոր բոլոր արեւմտամետներին:

Բնական է, որ այդ իրավիճակում իշխանությունները պետք է հիշեին անընդմեջ իրեն «եվրատլանտյան համագործակցության ջատագով» ներկայացնող Վաֆա Գուլուզադեին: Եվ վերջինս էլ պետք է «լիովին արդարացներ» վերջին օրերի զանգվածային ձերբակալությունները: Գուլուզադեն, մնալով իրեն վերապահված «դերասացության» շրջանակներում, կատարվածը «հիմնավորում է» այնպես, որ «Իրանն Ադրբեջանում կրոնական հեղափոխություն է նախապատրաստում»:

Խոսքը հասցեագրված է նրանց, ովքեր «իսլամական հեղափոխության ուրվական են տեսնում» ամենուր, երբ սեփական հավակնությունները բախվում են լուրջ հակազդեցության: Այնուամենայնիվ, Իրանի դեմ ոչինչ դեռ սկսված չէ, եւ Ադրբեջանն էլ ներգրավված չէ «մոլլապետության դեմ միջազգային ուժերի կանխարգելիչ գործողություններում»: Այս դեպքում ի՞նչն է ստիպել, որ Գուլուզադեն «հանրային ինդուլգենցիա տա» Իլհամ Ալիեւին:

Միայն մի բան՝ Ադրբեջանը խոստացել է, որ Իրանի դեմ ամեն պարագայում «սատարելու է ժողովրդավարության հաստատմանն ուղղված գործողություններին»: Պարզ ասած, այդ երկիրը մինչեւ վերջ հանձնվել է Իրանի դեմ կանխածրագրվող, եթե դա իրականությանը մոտ է, նախագծերում: Հերթական անգամ Բաքվի իշխող վարչակարգն ապացուցում է անհուսալիությունն ու քաղաքական անբարեհուսությունը: Իսկ եթե իրենց ոճով ասենք, Իլհամ Ալիեւի կառավարությունը փաստորեն «աշխարհի հնագույն մասնագիտությունն» է ընտրել «որպես ուղիղ ճանապարհ»:

Եվ Վաֆա Գուլուզադեն հերթական անգամ «հավաքագրվել է», որպեսզի «հասկանալի դարձնի դրա անհրաժեշտությունը»: Խնդիրն, իհարկե, իրանական կողմին ինչ-որ բան ասելը չէ: Կարծում ենք, որ այդ հինավուրց երկրի պատկան մարմիններն ավելին գիտեն, անհամեմատ ավելին, քան մենք կարող ենք քաղել ադրբեջանական բաց տեղեկատվամիջոցներից: Երեւույթն ավելի խորքային եզրահանգումների է մղում:

Այստեղ հիմնականը թերեւս այն է, որ, տարածաշրջանում չլինելով նախաբնիկ, ադրբեջանական հանրությունը փորձել եւ փորձում է ինքնահաստատվել մշակութաիմացաբանական այս կամ այն համակարգում, մինչդեռ նրա «վերնախավը», որին առաջնորդում է քաղաքականապես դրսեւորվելու մղումը, դառնում է արտաքին խաղացողների գործիք եւ փորձում դրանից իր համար շահ ապահովել:

Սա խնդիր է, որ, գրեթե համոզված ենք, ոչինչ չի բերելու ադրբեջանական ժողովրդին, բացի հերթական հիասթափությունից: Քանի որ հիմնական խնդիրները կարգավորելիս նույն արտաքին խաղացողները նախապատվություն տվել եւ տալիս են ոչ թե սուննիությանը, այլ այն արժեքներին, որոնք կրող ժողովուրդներն ու նրանց պետական կազմավորումներն են բնութագրում տարածաշրջանը: Անկախ՝ թե ինչ անուն եւ ովքեր են նրան տալիս: Այս իմաստով Վաֆա Գուլուզադեն «թութակի» իր դերը կատարելուց առաջ գոնե պիտի սեփական ճերմակ մազերից ամաչեր...

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ



## Ընտրությունը՝ մայիսի 6-ին

Նախագահ Սերժ Սարգսյանը հրամանագիր է ստորագրել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրություն նշանակելու մասին: Հրամանագրի համաձայն, ՀՀ Ազգային ժողովի հերթական ընտրությունը նշանակվել է 2012 թվականի մայիսի 6-ին:

## Առաքման եւ հասույթի գրքույկները վերացվեցին

**Կառավարությունը երեկ ուժը կորցրած է ճանաչել նախկինում ընդունած երկու որոշումները, որոնք վերաբերում են Հայաստանի տարածքում արտադրանքի, ապրանքների եւ դրանց գների (հասույթի) գրանցմանը (հաշվառմանը), տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցմանը (հաշվառմանը): Հարցը ներկայացնող պետական կոմիտեի նախագահ Գագիկ Խաչատրյանն ասաց, որ էլեկտրոնային հաշվետվությունների անցած տնտեսվարողների մոտ այդ գործառույթները կկատարվեն էլեկտրոնային եղանակով, իսկ մյուսների համար հիմք կընդունվեն հաշիվ-ապրանքագրերը:**

**Վարչապետ Տիգրան Սարգսյանի բնութագրմամբ, առաքվող արտադրանքի գրանցման կարգավորումն օրենքով երկար սպասված որոշում էր, որին դրական կարձագանքի բիզնեսը: Պետեկամուտների կոմիտեի նախագահն ավելացրեց, որ բիզնեսն այս որոշմանը սպասել է 14 տարի:** Ա. Մ.

## 18 մլրդ դրամի տնտեսում կենսաթոշակային համակարգում

**Կենսաթոշակների վճարումը միասնական կարգով կատարելու վերաբերյալ կառավարության երեկ ընդունած որոշման մասին խոսելով, վարչապետ Տիգրան Սարգսյանն ասաց. «Երկու տարվա ջանքեր պահանջվեցին, որպեսզի համակարգը մենք կարողանանք մաքրել: Արդյունքում ունեցանք 18 մլրդ դրամի տնտեսում: Միայն հաշվառման հստակեցումը, էլեկտրոնային եղանակի ներդրումը, համակարգը թափանցիկ դարձնելը մեծ արդյունքներ տվեցին, սակայն աշխատանքները դեռեւս կշարունակվեն: Այս գործընթացն ավարտելու ենք անհատական հաշիվների համակարգի ներդրմամբ»:** Ա. Մ.

## Հայ-ֆրանսիական բարեկամության պտուղները էջմիածին քաղաքում

Ֆրանսիայի դեսպան **Անրի Ռենոն** երեկ այցելել է Էջմիածին՝ հանդիպելու եւ ապագա ծրագրերը քաղաքապետ **Կարեն Գրիգորյանի** հետ քննարկելու: Էջմիածինը 1989թ. Իսի Լե Մուլինո քաղաքի հետ բարեկամության պայմանագիր է կնքել, համարվում են քույր քաղաքներ: Երկու քաղաքների համագործակցության շնորհիվ Էջմիածնում բազմաթիվ ծրագրեր են իրականացվել: Արդեն 6 տարի գործում է հայ-ֆրանսիական ֆրանսախոսների մշակութային SPFA կենտրոնը, որտեղ անվճար սովորում է 36 աշակերտ: Երկու երկրների հետ համագործակցության շնորհիվ 2007-ից Էջմիածնում գործում է «Բարձունք-5165» ֆրանսահայ բարեգործական ատամնաբուժարանը, որտեղ բուժվում են Էջմիածնի եւ հարակից գյուղերի համայնքների սոցիալապես անապահովների, զոհված ազատամարտիկների, վետերանների եւ միակողմանի ծնողազուրկ ընտանիքների երեխաները:

Քաղաքապետ Կարեն Գրիգորյանի հետ հանդիպմանը դեսպանը տեղեկացրեց, որ երկու երկրների միջեւ առեւտրի զարգացման քայլեր են ձեռնարկվում:

«Ընդամենը 2 օր առաջ Ֆրանսիայի կառավարությունում Հայաստանի հետ առեւտրական կապերն աշխուժացնելու միջոցառումների համալիր ծրագիր է ընդունվել», տեղեկացրել է դեսպանը: Հ. Հ.

# Երեւանցիներին անհրաժեշտ են ե՛ւ Աբովյան փողոցը, ե՛ւ Մաշտոցի այգին

1-ին էջից

**Թեպետ քննարկման սկզբում Նարեկ Սարգսյանը հավաստիացնում էր, որ կրպակները տեղադրվել են Մաշտոցի այգում որպես փոխհատուցում, բայց ավելի ուշ հայտարարեց, որ կրպակները դեռ ոչ ոքի չեն տրամադրվել, եւ կրպակների սեփականատերը Երեւանի քաղաքապետարանն է: Թե ովքեր են կրպակատերերը՝ Նարեկ Սարգսյանը չպատասխանեց, շարունակելով ինքն իրեն հակասել, թե այդ կրպակները դեռ տերեր չունեն, ու դրանք Երեւանի քաղաքապետարանինն են:**

**Եթե այդ կրպակները տերեր չունեն, ապա ի՞նչ փոխհատուցման մասին է խոսքը: Ավելի ուշ Նարեկ Սարգսյանն այլ թեզ առաջ քաշեց, ըստ որի կրպակները ժամանակավոր են մնալու Մաշտոցի այգում՝ 2-3 տարի, մինչեւ «Հին Երեւան» նախագծի ավարտը, որից հետո կապամոնտաժվեն եւ այլ վայրում կտեղադրվեն: Փաստորեն 3 տարի անց այս կրպակները կրկին ապամոնտաժվելու են եւ այլ վայրում տեղադրվելու եւս 7 տարի: «Ինչո՞ւ միանգամից այլ վայր չընտրեցիք կրպակների տեղադրման համար» հարցին էլ Նարեկ Սարգսյանը չպատասխանեց: Թե ինչո՞ւ է թիրախ ընտրվել հենց Մաշտոցի այգին, ճարտարապետն իր բացատրությունն ունի՝ անխնամ, անբարեկարգ, բարձիթողի վիճակում է, Մաշտոցի պողոտայի շրջանառությունից դուրս»: Բնապահպան Կարինե Դանիելյանը հակադարձում է. «Արդեն ընդունված մեթոդ է, նախ այգին չեն ոռոգում, որ ծառերը չորանան, հետո աղբ են լցնում, չեն մաքրում, որ հետո ասեն՝ դե կռիսանոց է, դրա համար էլ բարեկարգում ենք, կառուցապատում»:**




**«Ինչո՞ւ հասարակական-մասնագիտական լսումներ չեն անցկացվել, ինչո՞ւ բնապահպանական փորձագիտություն չի անցկացվել, այգու հարակից հատվածում երկու հիվանդանոց կա: Բուժհաստատությունների, մանավանդ ծննդատների հարեւանությամբ կանաչ տարածքներ, այգիներ պետք է լինեն, ինչո՞ւ է օրենքը խախտվում», հարցերի մի շարք ուղղեց բնապահպանը, որին ի պատասխան Նարեկ Սարգսյանն ասաց, որ քաղաքային իշխանություններն իրավունք ունեն այգիներում մինչեւ 10 տոկոս կառուցապատում իրականացնելու: Իրենք այսօր ընդամենը 9 տոկոս կառուցապատում են իրականացրել:**

**Կարինե Դանիելյանը Նարեկ Սարգսյանին հիշեցրեց ուսանողական այգու պատմությունը: «20.000 ստորագրություն էր հավաքվել, մտավորականները, Գիտությունների ազգային ակադեմիան, Բյուրականի աստղադիտարանը, Ազգային գրադարանը, բոլորը դեմ էին այգում սրճարանի կառուցմանը, երիտասարդները դիմեցին դատարան, բայց՝ ոչինչ, հիմա այգում երկուհարկանի սրճարանի փոխարեն երկու-երեքհարկանի սրճարան է կառուցվում: Նրանք այլեւս ձեզ չեն հավատում, ոչ ոք չի հավատում: Վստահության գեթ մեկ հատիկ այլեւս չի մնացել», ասաց Դանիելյանը՝ հավելելով, որ երիտասարդ ակտիվիստները շարունակելու են պայքարել այգու համար:**

**«Կան բազմաթիվ ապամոնտաժված կրպակներ, որոնց վարձակալության ժամկետը չէր ավարտվել: Ինչո՞ւ նրանց էլ փոխհատուցում չի տրվել, իսկ Աբովյանի կրպակներին տրվում է», հարցրեց Վազգեն Մանուկյանը: «Քաղաքապետարանը խոստացել է, որ բոլոր այն կրպակները, որոնք վարձակալության ժամկետ ունեն, բայց ապամոնտաժվել են, փոխհատուցում կստանան». «Ե՞րբ», շարունակեց Մանուկյանը: «Չեմ կարող ասել», պատասխանեց ճարտարապետը:**

**Հանրային խորհրդի փոխնախագահ Խոսրով Հարությունյանը շեշտեց, որ խնդիրը չափազանց կարեւոր է հասարակության համար: Երեւանցիներին անհրաժեշտ է ոչ միայն Աբովյան փողոցը, այլեւ Մաշտոցի այգին: «Քաղաքապետարանը կարող է կրպակները չտեղադրել եւ կրպակատերերին փոխհատուցում տալ», առաջարկեց Հարությունյանը: «Քաղաքապետարանն այդքան գումար չունի», հակադարձեց Սարգսյանը: «Աբովյան փողոցի կրպակները վարձակալության պայմանագիրը ստացել են անօրինական պայմաններում: Քաղաքապետարանը կարող է փոխհատուցում չտալ՝ հավելելով, որ վարձակալողները տարիներ շարունակ ապօրինի պայմաններում շահույթ են ստացել, դեռ մի բան էլ իրենք են պարտք քաղաքին: Իսկ եթե վարձակալները չհամաձայնեն, ապա քաղաքապետարանը պետք է դիմի դատարան», խնդրի լուծման մեկ այլ տարբերակ առաջարկեց Վազգեն Մանուկյանը՝ հանդիմանելով Նարեկ Սարգսյանի զարմացած դեմքի արտահայտությանը:**

**«Եթե քաղաքապետարանի իրավաբանները չեն կարող, ապա Հանրային խորհրդի իրավաբանները կդիմեն դատարան, կարծում եմ՝ բոլորը մեզ հետ կլինեն այդ հարցում», շարունակեց Մանուկյանը՝ պահանջելով քաղաքապետ Տարոն Մարգարյանից՝ անհապաղ դադարեցնել շինարարությունն ու խնդրին այլ լուծում տալ:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# ՎիվաՍել-ՄՏՍ-ն եւ «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոնի սրտաբանական կլինիկան հայտարարում են «Mobile-Health» նախագծի փորձնական կլինիկական գործարկման մասին

*ՎիվաՍել-ՄՏՍ-ն իր ցանցի հնարավորությունները կտրամադրի բժշկության ոլորտում եւս մեկ կենսական նշանակություն ունեցող նորարարության կիրառման համար*

ՎիվաՍել-ՄՏՍ-ն՝ «ՄՏՍ» ԲԲԸ դուստր ձեռնարկությունը, եւ «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոնի սրտաբանական կլինիկան՝ «Էրիքսոն Նիկոլա Տեսլա» ընկերության հետ համագործակցաբար, հայտարարեցին ընկերության անլար տեխնոլոգիաների վրա հիմնված «Mobile-Health» նախագծի պիլոտային կլինիկական գործարկման մասին: Այս լուծումը հնարավորություն է տալիս հեռավորության վրա հետեւել հիվանդի առողջությանը. կատարել համապատասխան չափումներ եւ արդյունքները փոխանցել մասնագետներին:



Զննումներն իրականացվում են որոշակի պարբերականությամբ կամ շարունակաբար եւ բջջային ցանցի միջոցով փոխանցվում են բուժող բժշկին: Հիվանդները համապատասխան չափումները կատարում են օգտագործման մեջ դյուրին սարքերի միջոցով, ինչպիսիք են, օրինակ, արյան ճնշման մոնիտորը կամ էլեկտրոկարդիոգրաֆը: Սարքերի կոմպլեկտը ներառում է օգտագործման մեջ դյուրին ավտոմատացված հաղորդակցման սարք, որը վերը նշված սարքերից/սենսորներից ստացվող տվյալները կուտակելով, Bluetooth միացմամբ ՎիվաՍել-ՄՏՍ-ի ցանցի միջոցով դրանք անվտանգ եւ ճշգրիտ կերպով փոխանցում է համակարգին եւ հատուկ սերվերին՝ բուժաշխատողներին թույլ տալով վերահսկել հիվանդի առողջական վիճակը: Տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը կատարվում է համակարգչային հատուկ ծրագրի միջոցով:

«Mobile-Health» լուծումը կիրառվում է հիմնականում սրտաբանության եւ թոքաբանության մեջ: Ակնկալվում է, որ համակարգը կկիրառվի խրոնիկ հիվանդների եւ երկարատեւ հիվանդությունների բուժման, ինչպես նաեւ գյուղական շրջաններում եւ բարձրորակ հատուկ խնամք ապահովող բուժկենտրոններից հեռու բնակվող հիվանդների բուժման համար, հիվանդանոցից ժամկետից շուտ դուրս գրված կամ տնային, ինչպես նաեւ հետվիրահատական խնամքի կարիք ունեցող եւ այլ հիվանդների համար:

Ժամանակակից գլոբալ մարտահրավերներից մեկը խրոնիկ եւ երկարատեւ հիվանդություններով տառապող մարդկանց թվի աճն է, այդ թվում՝ ասթմայի, շաքարախտի եւ այլ հիվանդությունների դեպքում: Ամեն տարի սրտանոթային հիվանդություններից մահանում է մոտ 17 միլիոն մարդ: Մյուս կողմից՝ աճում է մոլորակի ծեր (65+) բնակչության թիվը: Եթե 2007թ. 65 տարեկանից բարձր էր բնակչության 7%, ապա 2025թ.-ին նրանց թիվը կկազմի 10%, իսկ 2050թ.-ին՝ 16%:

«Mobile-Health»-ի առավելությունները թե՛ հիվանդների եւ թե՛ առողջապահության համակարգի համար անվիճելի են: Հերթական ստուգման համար որեւէ վայրից յուրաքանչյուր պահի ստուգման հնարավորությունը նշանակում է գտնվել բժշկի հսկողության տակ՝ առանց բուժհիմնարկություն հասնելու անհրաժեշտության: Բացի դրանից՝ «Mobile-Health»-ը հնարավորություն է տալիս առավել արդյունավետ կառավարել ժամանակն ու ռեսուրսները, առավել ճշգրիտ ախտորոշել եւ բուժել՝ նպաստելով հիվանդների կյանքի որակի բարձրացմանը:

««Mobile-Health»-ը ՎիվաՍել-ՄՏՍ-ի ներկայացրած հերթական նորարարական տեխնոլոգիան է, որի նպատակը մեր հայրենակիցների առողջապահական կարիքների բավարարումն է, ինչպես նաեւ խրոնիկ հիվանդությունների բուժման ծառայությունների համակարգի արդիականացումն ու բուժսպասարկման աշխարհագրական հասանելիության ապահովումը: «Mobile-Health»-ի շնորհիվ հիվանդները կկարողանան ստուգումներ անցնել տնային պայմաններում եւ ստացված տվյալները հատուկ բժշկական սարքավորման օգնությամբ ՎիվաՍել-ՄՏՍ-ի ցանցի միջոցով անմիջապես փոխանցել բժշկին, որն էլ իր հերթին կարող է հետեւել հիվանդի առողջությանը օնլայն եղանակով»,- նշեց ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**:

Հիշեցնենք, որ ՎիվաՍել-ՄՏՍ-ի 2G/3.75G ցանցերը ծառայում են հակակարկտային համակարգի, ինչպես նաեւ շտապ օգնության համակարգի կապի ապահովման նպատակով:

# Հոգեկան հիվանդությունները նույնպես բուժելի են

Մարդու հոգեկան առողջության վրա ազդող գործոնները շատ են՝ սոցիալական միջավայրը, բնակության վայրը, կրթությունը, դաստիարակությունը եւ այլն: Հայկական հոգեբուժական ասոցիացիայի նախագահ **Արմեն Սողոյանը** ընդգծում է՝ կարեւոր գործոն է եւ գենետիկական նախատրամադրվածությունը, ինչը բոլոր ժողովուրդների մեջ բաշխված է հավասարաչափ: Ընդհանուր առմամբ՝ հոգեկան խանգարումները լինում են բնածին ու ձեռքբերովի:

Երեկ «Հայացք» ակումբում Արմեն Սողոյանը նաեւ անդրադարձավ բուժման հավանականությանը՝ նախ թյուր համարելով կարծիքը, թե բոլոր հոգեկան հիվանդություններն անբուժելի են. «Պարզապես կան հոգեկան հիվանդությունների դժվար բուժվող տեսակներ, իսկ անբուժելի դեպքերը հազվադեպ են»:

Ապացուցված է՝ ժամանակին ճիշտ բուժում ստացած հոգեկան հիվանդություն ունեցողն ապաքինվելուց հետո ունակ է աշխատելու, ստեղծագործելու եւ ապրելու բնականոն կյանքով: Այսինքն՝ ապաքինվելուց հետո համարվում է միանգամայն առողջ:

«Հասարակության վերաբերմունքը որքան համբերատար է լինում հոգեկան հիվանդի հանդեպ, այնքան բարելավվում է հիվանդի վիճակը», նշեց պարոն Սողոյանը: Իսկ հոգեկան հիվանդությունը «ամոթ ու խայտառակություն» համարվող կաղապարներից ազատելու գործում, ըստ նրա, մեծ է եւ լրատվամիջոցների դերը:



Հիվանդության ու դրա բուժման մասին լրատվամիջոցները նախ պետք է հաղորդեն ճիշտ ինֆորմացիա, փոխեն մտածելակերպը, որ հոգեբույժին, հոգեթերապեւտին դիմելն ամոթալի չէ: Ու բացի այս ամենից՝ չխթանեն հոգեկան հիվանդներին ծաղրող «զվարճալի» հաղորդումների ու սերիալների ցուցադրությունը:

Բանախոսն անդրադարձավ նաեւ վիճակագրությանը. անցյալ տարվա ընթացքում հոգեբուժական տարբեր ծառայությունների հետ առնչություն են ունեցել Հայաստանի շուրջ 44 հազար քաղաքացիներ:

**Ի. Պ.**



# Ո՞ւմ են նվիրելու Թումանյանի բնակարանը

**Կան հասկացություններ, որոնք որքան էլ փորձ արվի հստակեցնելու, չի հաջողվի, քանի որ առավել հաճախ այդ հասկացություններն իրականությանը որեւէ առնչություն չունեն: Այդպիսի մի հասկացություն էլ Թբիլիսիի հայկական համայնք ասվածն է, որն առանձնակի ոչ դեմք ունի, ոչ միավորում, ոչ ընդհանրական մի կառույց, ոչ էլ թեկուզ մի քանի կազմակերպություններով ներկայացող ընդհանրություն:**

**Թբիլիսիիում գործում են տարբեր տրամաչափի, հանուն արդարության՝ մանր-մունր տրամաչափի կազմակերպություններ, որոնք բոլորն էլ հավակնում են ներկայացնելու ողջ համայնքը, սակայն իրականությունն այն է, որ գրեթե բոլորի դեպքում համայնքն առանձնակի ոչ մի կապ չունի ոչ մեկի հետ: Ըստ էության, ստացվել է մի իրավիճակ, երբ Թբիլիսիի հայկական համայնքը քիչ թե շատ ընդհանրական ու որոշակի առումով՝ համայնքային կարող է ներկայացնել միայն Հայ առաքելական եկեղեցու վիրահայոց թեմը, որ, սակայն, Հովհաննես Թումանյանի թիֆլիսյան բնակարանի պատմության հետ առնչություն չունի:**

**Երեկ Թբիլիսիում վերջապես կայացել է 145 հզ. դոլարանոց առք ու վաճառքի գործարքը, Թումանյանի բնակարանի չորս սենյակները այլեւս վրացի գործարար Լեժավայի սեփականությունը չեն: Գործարքը վրացի գործարարի հետ ստորագրել է Հայաստանի գրողների միության նախագահ Լեւոն Անանյանը՝ Գրողների համահայկական հիմնադրամի անունից, ստանալով նաեւ բնակարանի այդ հատվածի բանալիները:**

**Մինչ գործարքի կայացումը տեղեկություններ կային, թե վրացի գործարարն իրեն պատկանող հատվածում որոշակի նորոգման աշխատանքներ էր սկսել, սակայն դրանք ավարտված չեն, ասել է թե բնակարանը դեռեւս կարիք ունի նորոգման: Թե ով եւ ինչպես է նորոգելու բնակարանը՝ թերեւս պարզ կլինի այսօր, երբ արդեն Երեւանում Լեւոն Անանյանը ներկայացնի Վրաստան այցի մանրամասներն ու հնարավոր զարգացումները:**

**Իսկ մինչ այդ հարցականները չեն պակասում՝ վերաբերելով ոչ միայն բնակարանի նորոգմանը, այլեւ հետագա օգտագործման ու շահագործման նպատակին, շահագործողին եւ այլն: Որ Թումանյանի բնակարանը պետք է գնվեր ու նվիրաբերվեր Թբիլիսիի հայկական համայնքին՝ խոսվել ու հայտարարվել է բազմիցս, սակայն թե ով է, ըստ հայտարարությունների հեղինակների, Թբիլիսիի հայկական համայնքը ներկայացնողը՝ այդպես էլ չի հստակեցվում:**

**Մի խոսքով, արդեն իսկ ակնհայտ է, որ դժգոհողներ ու բողոքողներ հաստատ կլինեն, անկախ այն հանգամանքից, թե Թբիլիսիի հայկական համայնք կոչվելու պատիվն ում կվերապահվի:**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Նվիրատվություն Շոշ համայնքին

**«Հայաստան» համահայկական հիմնադրամից տեղեկացանք, որ հիմնադրամի «Տորոնտոյի» տեղական մարմինը շարունակում է սատարել Լեռնային Ղարաբաղի Ասկերանի շրջանի Շոշ համայնքին: Տորոնտոյաբնակ անանուն բարերարը համայնքին նվիրել է դպրոցական նոր ավտոմեքենա: Ի. Պ.**



# Ծանր բեռ մանկան ուսերին

**15-20 կգ կշռող երեխան օրական բարձրացնում է 5-6 կգ ծանրություն. սա իրականում լուրջ խնդիր է, որին բախվում են դպրոցական երեխաները: Տարրական դասարանի երեխաները, օրական ունենալով 5-6 դասաժամ, ստիպված են իրենց ուսերին կրել մոտ 6 կգ կշռող պայուսակ, որի հետեւանքով, ինչպես փաստեց բժիշկ Աիդա Սուքիասյանը, կարող են առաջանալ լուրջ խնդիրներ: «Դպրոցական, մասնավորապես ցածր դասարանի երեխաների ողնաշարն ամբողջապես ձեւավորված չի լինում: Երբ աճման տարիքում երեխան բարձրացնում է մեծ ծանրություն, կարող են առաջանալ ողնաշարի լուրջ հիվանդություններ», ասաց Աիդա Սուքիասյանը եւ խորհուրդ տվեց երեխաներին՝ կրել երկկանթ պայուսակներ: 7-ամյա Անահիտի մայրը եւս մտահոգված է այս խնդրով: «Ես ինքս դժվարությամբ եմ բարձրացնում աղջկաս պայուսակը, էլ ուր մնաց երեխան բարձրացնի», ասաց երկու զավակների մայր Լուսինե Սամվելյանը:**

**Ինչպես աշխարհի մի շարք երկրներում, այնպես էլ ՌԴ որոշ դպրոցներում գործում է երկգրքի տարբերակը. մի գիրքը դպրոցում, մյուսը տանը, երեխան ազատվում է վնասակար ծանրությունը կրելուց: Յավորովի անվան դպրոցի ուսուցչուհի Նարինե Հայրապետյանին քիչ հավանական է թվում նման տարբերակի կիրառումը մեր դպրոցներում: «Այս տարբերակն իհարկե շատ արդյունավետ եւ օգտակար կլիներ երեխաների համար, բայց ֆինանսի խնդիրն, ինչպես նաեւ գրքերի սահմանափակ քանակը նման «շռայլություն» թույլ չեն տա», ասաց տիկին Հայրապետյանը նշելով, որ երեխաների բեռն ավելի է ծանրացել, քանի որ բացի հայոց լեզու, մաթեմատիկա եւ այլ առարկաներից, գրքեր են հրատարակվել նաեւ նկարչություն, ֆիզդաստիարակություն առարկաների համար:**

**ՔՐԻՍՏԻՆԵ ԽԼՂԱԹՅԱՆ**

# Շնորհակալություն

Մեր սիրելի եղբոր՝ դոկտ. Անդրեաս Ծուլիկյանի մահվան քառասունքի առթիվ ցանկանում ենք խորին շնորհակալություն հայտնել բոլոր այն կազմակերպություններին եւ տարբեր երկրներում ապրող անհատներին, որոնք անձամբ, հեռախոսազանգերով կամ էլեկտրոնային հաղորդագրություններով ցավակցեցին մեզ, մասամբ մեղմեցին մեր ցավը եւ մխիթարական խոսքերով սփոփեցին մեր հոգիները:

**ՏԻԳՐԱՆ եւ ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆՆԵՐ**

# Ժխտողականություն. կեղծ պնդումնե՞ր, թե՞ խոսքի ազատության սահմանափակում

Ֆրանսիայի խորհրդարանը քրեականացրեց Ֆրանսիայում պաշտոնապես ճանաչված ցեղասպանությունների ուրացումը, մասնավորապես դա վերաբերում է Օսմանյան կայսրությունում իրականացված Հայոց ցեղասպանությանը: Այժմ հատկապես Թուրքիայում ձայներ են հնչում ժողովրդավարական հասարակությունների սկզբունքներին այդ ձեւով հասցվող վնասը դատապարտելու համար, քանզի օրենքը շոշափում եւ նույնիսկ սահմանափակում է խոսքի ազատության հիմնարար իրավունքը:

Այսպիսով ընդգծվում է այն փաստը, որ Թուրքիայի դիրքորոշումը ոչ թե ժխտում է ցեղասպանության իրողությունը, այլ ավելի շուտ վերաբերում է կարծիքների արտահայտմանը, փաստերի բացատրությանը: Տվյալ փաստարկը հիմնվում է մասնավորապես իրադարձությունների լուսաբանման նպատակով պատմաբանների հանձնաժողով ստեղծելու Թուրքիայի առաջարկության վրա:

Այդուհանդերձ, անկախ այն փաստից, որ պատմական հստակության վկայակոչվող բացակայությունը ինքնին ռեւիզիոնիստական մտքի կարեւոր տարր է, քանզի պատմաբանները վաղուց բերել են ցեղասպանության ապացույցը, իրավաբանական տեսակետը ցեղասպանության պատմական իրողության հարցից այն կողմ է անցնում: Խոսքի ազատության չափանիշի առնչությամբ ֆրանսիացիների որոշման օրինականության հարցը դիտարկելիս հարկավոր է ստուգել, որ նաեւ համոզմունքի պաշտպանություն գոյություն ունի այնտեղ, որտեղ վկայակոչում են համոզմունքի ազատությունը: Գլխավոր խնդիրն այն փաստն է, որ հենց գոյություն չունի համոզմունքի նման պաշտպանություն: Քանզի մի կողմից այն փաստի ժխտումը, որ 1915-1916 թթ. հայերի տեղահանությունն ու բնաջնջումը երիտթուրքերի վարչակարգի կանխամտածված քաղաքականությունն էր, համապատասխանում է Թուրքիայի Հանրապետության ծանր հետեւանքներով (մասնավորապես իրավաբանական) հղի քաղաքական դիրքորոշմանը, քանի որ ցեղասպանության պատմական իրողության քողարկումը կարող է հանգեցնել քրեական հետապնդումների: Մյուս կողմից, եվրոպական պետություններում ծագում է գործելու անհրաժեշտություն, քանզի Թուրքիայի Հանրապետությունը վերջին հարյուր տարիներին կարողացել է եվրոպական որեւէ պետության ամեն մի հայտարարություն դիտարկել իբրեւ Թուրքիային հասցված վիրավորանք եւ միջամտություն նրա ներքին գործերին:

Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնելու Ֆրանսիայի որոշումը ոչ թե ծառայում է պատմական փաստի հաստատմանը, այլ պաշտպանում է ցեղասպանության իրողությանն առնչվող պատմական գիտելիքը: Դա ոչ թե դատողություն է պատմության վերաբերյալ, այլ պատմական իրողության պաշտպանություն: Նման մտածելակերպը խորթ չէ գերմանական իրավունքին, եթե նկատի ունենանք, օրինակ, Գերմանիայում Հոլոքոստի ժխտումը քրեականացնող իրավաբանական հիմքերը (Քրեական օրենսգրքի 130-րդ պարագրաֆ, 3-րդ պարբերություն):

Այսպես, Գերմանիայի սահմանադրական դատարանը մասնավորապես հետաքրքրվել է խոսքի ազատության հիմնարար իրավունքի ոտնահարման հարցով: Դատարանը տարբերակում է համոզմունքները եւ փաստացի պնդումները, գտնելով, որ վերջիններս կարող են պաշտպանվել լոկ այն դեպքում, եթե թույլ են տալիս համոզմունք ձեւավորել: Ըստ դատարանի, ժողովրդավարությունը սկզբունքորեն որեւէ շահ չունի պաշտպանելու փաստացի սխալ պնդումները, քանզի դրանք չեն նպաստում հասարակության ներսում համոզմունքի ձեւավորմանը: Սահմանադրական դատարանը այդպիսով 1994 թ. ապրիլի 13-ի վճռով գտավ, որ Հոլոքոստի ժխտման քրեականացումը չի վնասում խոսքի ազատությանը, քանզի ճշմարտությունից այդքան հեռացած որեւէ պնդում սահմանադրական իմաստով համոզմունք չէ:

Եթե նույնիսկ տվյալ հարցը Գերմանիայի սահմանադրական դատարանի դիրքորոշումից տարբեր ձեւով դիտարկվի, խոսքի ազատության սահմանադրական արդարացման հարցը չի վերանում: Հարկավոր է ծանրութեթեւ անել. մի կողմում հիմնարար իրավունքի սահմանափակման վկայակոչումն է, մյուսում՝ զոհերի իրավունքների ոտնահարումը եւ նույնիսկ՝ ուրացումը: Այստեղ եւս կարող է օգտակար լինել Հոլոքոստի քրեականացմանը վերաբերող գերմանական օրենսդրությունը: Օրենսդրության գլխավոր կետը զոհերի պաշտպանությունն է զրպարտությունից եւ զոհվածների ու նրանց ժառանգների հիշատակի անարգումից (Քրեական օրենսգրքի 189-րդ պարագրաֆ):

Ուստի հարկավոր է խորհրդածել հիմնարար ազատությունների նման կիրառությունից պաշտպանվելու եղանակի մասին, կիրառություն, որը ժխտում կամ վտանգում է եվրոպական հիմնարար արժեքները: Ամենածանր ոճիրների ժխտումը, որոնցից են միջազգային իրավունքով քրեականացված հակամարդկային հանցագործությունները, ինչպես նաեւ զոհերի անարգումը, անուրանալիորեն դրա մասն են կազմում: Դա համապատասխանում է ռասիզմի եւ այլատյացության որոշ դրսեւորումների դեմ քրեական իրավունքի միջոցով պայքարելուն վերաբերող Խորհրդի 2008 թ. նոյեմբերի 28-ի թիվ 2008/913/JAI շրջանակային որոշման 1-ին հոդվածի 1c պարբերությանը, որը պահանջում է քրեականացնել «ցեղասպանության ոճիրների հրապարակային դրվատումը, ժխտումը կամ գռեհկացումը»:

Ժխտողականությունը քրեականացնելու որոշումը պատմաբաններին շրջանակների մեջ դնող եւ որոնումները պատժող սկզբունք չէ: Սխալ է այն փաստարկը, թե նման օրենքը կվնասեր հետազոտությունների ազատությանը: Ցեղասպանության ոճիրներին վերաբերող ազատ հետազոտությունը եւ իրականացման կառույցներին վերաբերող աշխատանքը հնարավոր են լոկ այն ժամանակ, երբ ճանաչումը եւ «այո» եւ «ոչ» հարցի ազատագրումը տեղի են ունեցել. այդ դեպքում ուրացումը այլեւս խոչընդոտ չէ ամբողջովին հետազոտության վրա կենտրոնանալու համար: Այսպես, Հոլոքոստին վերաբերող մանրակրկիտ հետազոտությունը հնարավոր դարձավ, քանզի որպես հակամարդկային ոճիր եւ ցեղասպանություն այդ իրադարձության իրողությունը երբեւիցե կասկածի տակ չառնվեց: Ցեղասպանության ժխտումը, հատկապես, եթե դա իրագործել է պետությունը քաղաքական-ռազմավարական պատճառներով եւ եթե այն պարտադրված է արտերկրին, խանգարում է հետազոտությանը եւ փաստարկումը հանգեցնում պարզեցումների, մասամբ՝ փաստերի չիմացության պատճառով: Դա պարզ երեւում է հայերի բնաջնջման օրինակով, որն ավելի քան 95 տարի ժխտում են ոճրագործության հեղինակները եւ հետագա սերունդները:

Ֆրանսիայում ընդունված օրենքը իրավաբանական տարածք է բացում ցեղասպանության հանցագործությանը վերաբերող պատմական գիտելիքը պաշտպանելու, տվյալ ոճրագործության խորացված հետազոտություն կատարելու եւ նման քաղաքականության շարունակումից խուսափելու համար: Քանզի պատմության վիճարկումից բացի, ցեղասպանության ուրացումը նշանակում է չցանկանալ ներկայումս եւ ապագայում հրաժարվել ուժի գործադրումից որպես քաղաքական միջոցից: Թուրքական ուրացումը սոսկ պատմության մռայլ էջերի ժխտումը չէ: Խոսքը քաղաքական ռազմավարության մասին է, որը գրեթե հարյուր տարի որոշակի քաղաքականության հիմքն է կազմում. դա թուրքերի ազգային ինքնության ձեւավորման պրոցեսի ամբողջական տարր է:

Այս համատեքստում սեփական անցյալը հիշելու աշխատանքի մերժումը մասնավորապես հնարավոր է դարձնում Թուրքիայում փոքրամասնությունների հանդեպ բռնությունների քաղաքականությունը եւ մարդու իրավունքների ոտնահարումը: Բայց միայն Թուրքիայում չէ, որ ժխտողականությունը քաղաքականության հիմքն է կազմում. դա նաեւ թուրքական ծագումով բազմաթիվ ֆրանսիացի եւ եվրոպացի անձանց պատմական գիտակցության եւ քաղաքական կողմնորոշման հիմնարար տարր է: Նրանց քաղաքական դիրքորոշումները վնասում են Ֆրանսիայում ապաստանած վերապրողների սերունդների անձի իրավունքներին: Ինչպես ցույց են տալիս նախնական քննարկումները, պատգամավորներն ու սենատորները գիտակցում էին, որ ցեղասպանության ոճիրների ուրացումը չի կարող համարվել որպես համոզմունքի պարզ արտահայտություն, եւ որ ստահոդ պնդումներով ուղեկցվող նման ուրացումները քաղաքական-ռազմավարական բնույթ ունեն եւ բացում ու նույնիսկ հավերժացնում են քաղաքական գործունեության գծերը: Պատգամավորները գիտեին, որ իրենք քաղաքական պատասխան են տալու ժխտողականության քաղաքական ռազմավարությանը:

Հետեւողական ձեւով նրանք ընդլայնեցին Հոլոքոստի ժխտման քրեականացմանը վերաբերող եւ տարիներ առաջ ընդունված առանձնահատուկ օրենքը, որպեսզի ընդհանուր օրենքում մասնավոր դեպքերի շրջանակից դուրս պատժվի հակամարդկային ոճիրների ժխտումը: Ֆրանսիացիների որոշման հետ կապված քննարկումների առիթով կարեւոր է հիշեցնել, որ հակամարդկային ծանր ոճիրների ակտիվ ժխտման դեմ ուղղված հստակ դիրքորոշման բացակայության պայմաններում առկա է եվրոպական հիմնարար արժեքների վնասման վտանգ: Արդ, ժխտողականության դեմ պայքարելը այսօր գիտականորեն եւ մարդկայնորեն կարեւոր աշխատանք է, որը նաեւ մեծ դեր ունի կանխիչ ռազմավարությունների զարգացմանը վերաբերող խորհրդածությունների մեջ: Քանզի ցեղասպանությունը մի ոճիր է, որն իրականացվում է ոչ այնքան հեղինակների, որքան հետագա սերունդների եւ նրանց ապագայի համար որոշակի իրողություն ստեղծելու նպատակով:

Ահա թե ինչու պատասխանատուների թողած հասարակությունները հարկավոր է մասնակից դարձնել ինչպես հիշողությանն առնչվող աշխատանքին, այնպես էլ սոցիալական եւ քաղաքական պատասխանատվությանը: Գերմանական իրավունքի նշանավոր փիլիսոփա Բեռնհարդ Շլինկը իրավունքի պատմության տեսակետից լուսաբանել է, որ հանցագործների ընկերակցությանը համերաշխված ամեն ոք ոճրագործությունից հետո դառնում է հանցավոր եւ արարքի ժխտման միջոցով փորձում է ձերբազատվել իր հանցավորությունից: Այս իմաստով ֆրանսիացիների ընդունած որոշումը պետք է համարվի ուղղորդիչ:

**ՄԻՀՐԱՆ ԴԱԲԱՂ**
**Սփյուռքի եւ ցեղասպանական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն**
**Ռուրի համալսարան, Բոխում, Գերմանիա**

**Ֆրանսիական «Le Monde»-ից թարգմ. Պ. Ք.**

# Մտահոգություններ կանադական թանգարանում Հայոց ցեղասպանությունը ներկայացնելու վերաբերյալ

Կանադայում գործող «Զորյան ինստիտուտի» բաժիններից՝ «Ցեղասպանության եւ Մարդու իրավունքների ուսումնասիրությունների միջազգային ինստիտուտը» (ՑՄԻՈՒՄԻ) հրատապ հաղորդագրությամբ իր մտահոգություններն է արտահայտում «Մարդու իրավունքների կանադական թանգարանում» (ՄԻԿԹ) ընդհանրապես ցեղասպանության եւ մասնավորապես Հայոց ցեղասպանության ներկայացման ձեւի եւ բովանդակության վերաբերյալ:

Ինը տարի առաջ՝ 2003-ի ապրիլին Վինիպեգում հրավիրված հավաքի ժամանակ ՑՄԻՈՒՄԻ-ն, ողջունելով Կանադայում «Մարդու իրավունքների թանգարան» հիմնելու գաղափարը, ներկայացրել է որոշ առաջարկներ: Հետագայում, տեսնելով, թե ինչպիսի մթնոլորտ է տիրում թանգարանի ղեկավարների վարած քաղաքականության շուրջը, 2009-ի դեկտեմբերին պաշտոնական հանդիսությամբ առավել մանրամասն է ներկայացրել իր պատկերացումներն ու թելադրանքները: Բայց դարձյալ նկատելով անտարբերություն կանադական թանգարանի ղեկավարության կողմից՝ 2011-ի փետրվարին եւ օգոստոսին երկու հրապարակային հաղորդագրությամբ է հանդես եկել եւ անձնական նամակ հղել թանգարանի նախագահ եւ գործադիր տնօրեն Ստյուարտ Մուրեյին:

Մինչեւ օրս նամակը մնացել է անպատասխան: Ներկայացված առաջարկներն էլ անտեսվել են: Առաջացած հարցերը բազմազան են. մարդու իրավունքների խախտման ո՞ր դեպքերն են ընդգրկվելու, ինչքա՞ն տարածք է հատկացվելու յուրաքանչյուրին, ինչպիսի՞ բովանդակությամբ, տեւակա՞ն, թե՞ ժամանակավոր են լինելու ցուցանմուշները, ինչպե՞ս է ցեղասպանությունը որպես մարդու իրավունքների խախտման օրինակ ներկայացվելու եւ այլն, եւ այլն:

ՑՄԻՈՒՄԻ-ն գտնում է, որ մինչեւ այս հարցերի պատասխանները չհստակեցվեն, թանգարանի առաքելությունը չի կարող ամբողջական դառնալ, եւ դասերն էլ, որ թանգարանի այցելուները քաղելու են, չեն կարող արդյունավետ լինել, հատկապես եթե այդ դասերը ծառայելու են կանխելու հետագա բռնություններն ու անարդարությունները:

Հասարակական տարբեր հաստատությունների կողմից քննադատական ելույթներին պատասխանելու համար թանգարանի տնօրենությունը «Գլոբ ընդ Մեյլ» թերթի 2011 թվի մարտի 23-ի համարում հայտարարություն է զետեղել, որտեղ նշվել է, որ թանգարանը բոլորովին էլ ցեղասպանության թանգարան չէ: Դրան ի պատասխան գրված ՑՄԻՈՒՄԻ-ի օգոստոսյան հաղորդագրությունը տնօրենության ուշադրության է հրավիրել այն փաստը, որ որպես ֆեդերալ հաստատություն թանգարանը պարտավոր է հետեւել Կանադայի կառավարության բազմամշակութային քաղաքականությանը եւ հավասար անաչառությամբ վերաբերվել բոլորին:

Վերջերս վերոնշյալ ինստիտուտը տեղեկացրել է, որ Հայոց ցեղասպանությունը թանգարանում ներկայացվելու է Կանադայի խորհրդարանում ընդունված հինգ ցեղասպանությունների թվում, սակայն մտահոգությունները դեռեւս չեն փարատվել, քանի որ նախկինում բարձրացված հարցերը դեռ չեն գտել իրենց համապատասխան լուծումները: ՑՄԻՈՒՄԻ-ի կարծիքով, թանգարանի ղեկավարությունը պարզապես «համայնքային զատորոշման» քաղաքականություն է վարում, տարբեր խմբակցություններին տարբեր ժամանակներում հրավիրելով հանդիպումների, եւ միաժամանակ անտեսելով կարեւորագույն մի հիմնարկության առաջարկները, որը հենց արծարծված խնդիրներով է զբաղվում: Ինստիտուտը կոչ է անում բոլոր հայկական հաստատություններին եւ կազմակերպություններին՝ համախմբվել եւ «մեկ ձայնով խոսել» թանգարանի ղեկավարության հետ:

**Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ**

# Եգիպտոսի մասնատման ծրագրեր ոչ կառավարական կազմակերպություններում

Եգիպտոսի իշխանությունները մեղադրական եզրակացություն են պատրաստել երկրի ոչ կառավարական կազմակերպությունների գործով: «Նյու Յորք թայմս» թերթի տվյալներով, այդ կազմակերպությունների աշխատակիցները մեղադրվում են անօրինական գործունեության մեջ, որը միտված է Եգիպտոսի իրադրության ապակայունացմանը եւ երկրի մասնատմանը:

Քննիչների կարծիքով, ամերիկյան 4 կազմակերպություններ (Միջազգային հանրապետական ինստիտուտ, Ազգային դեմոկրատական ինստիտուտ, Լրագրողների միջազգային կենտրոն եւ Freedom House) եւ գերմանական Կոնրադ Ադենաուերի հիմնադրամը փորձել են ապակայունացնել երկիրը, Եգիպտոսում գործակալներ են հավաքագրել, համագործակցել են ԱՄՆ-ի եւ Իսրայելի հետախուզությունների հետ, հրահրել կրոնական բախումներ, իսկ ընդհանուր առմամբ «փորձել են տապալել գործող վարչակարգը»: Դատախազությունում կարծում են, որ այս ամենն արվել է «ամերիկյան Կոնգրեսի, հրեական լոբբիի եւ ԱՄՆ հանրության ցուցումով»:



Քննության նյութերում հայտնվել են նաեւ օտարերկրյա ոչ կառավարական կազմակերպություններում խուզարկությունների ժամանակ առգրավված փաստաթղթեր: Դրանց մեջ կա Վիկիպեդիայի քարտեզ, որտեղ երկիրը բաժանված է 4 ավանդական տարածաշրջանների՝ Վերին Եգիպտոս, Ներքին Եգիպտոս, Մեծ Կահիրե Սուեզով եւ Սինայ: Քննիչները պնդում են, որ այդ քարտեզը պետության ապագա մասնատման ծրագիրն է:

Տվյալ գործով ամբաստանվում են 16-20 ամերիկացի (մի մասը թաքնվում է Կահիրեում ԱՄՆ դեսպանատանը), 14 եգիպտացի, 3 սերբ, 2 լիբանանցի, 2 գերմանացի, մեկական պաղեստինցի, հորդանանցի եւ նորվեգացի: Մեղավոր ճանաչվելու դեպքում նրանք ենթակա են մինչեւ 5 տարվա բանտարկության:

Օտարերկրյա կազմակերպությունների հետ կապված սկանդալը արդեն լարվածություն է առաջացրել ԱՄՆ-ի ու Գերմանիայի հետ Եգիպտոսի հարաբերություններում: Մասնավորապես ամերիկացիները սպառնացել են սառեցնել Եգիպտոսին հատկացվող ֆինանսական օգնությունը:

Սպասվում է, որ դատական գործի քննությունը կսկսվի փետրվարի 26-ին:

# Expressen. «Շվեդիայի արտգործնախարարն ամերիկյան լրտես է»



Շվեդական Expressen թերթը պնդում է, թե Շվեդիայի արտգործնախարար Կառլ Բիլդտը 1973-ից ամերիկացիների իրազեկիչն է եւ ԱՄՆ կառավարության հետ համագործակցել է իր երկրի օրենսդրությանը հակասող ձեւերով: Որոշ տեղեկությունների համաձայն, Բիլդտին հավաքագրել է Ջորջ Բուշ կրտսերի քաղաքական խորհրդական Կառլ Ռոուվը, որին շվեդ նախարարը հրապարակավ անվանում է «հին բարեկամ»:

Առայժմ հայտնի չէ, թե Բիլդտին կոնկրետ ինչ մեղադրանքներ են ներկայացվում, սակայն Expressen-ի սկզբնաղբյուրը՝ հանրահայտ WikiLeaks կայքէջը խոստացել է շուտով հրապարակել համապատասխան փաստաթղթեր, որոնք կվկայեն ԱՄՆ-ի օգտին շվեդ նախարարի կատարած լրտեսության մասին: Թերթի զրուցակիցը պնդում է, որ փաստաթղթերի հրապարակումից հետո Բիլդտը ստիպված կլինի հրաժարական տալ եւ վերջ դնել իր քաղաքական կարիերային:

Շվեդիայի իշխանություններին ուղղված այս մեղադրանքները կապված են այդ երկրում WikiLeaks-ի հիմնադիր Ջուլիան Ասանժի դատական հետապնդումների հետ, որն ամբաստանվում է սեռական ոտնձգությունների մեջ: Ստոկհոլմում ձգտում են հասնել Մեծ Բրիտանիայից Ասանժի արտաքսմանը: Ասանժի կողմնակիցները համոզված են, որ Ստոկհոլմն ուզում է նրան հանձնել ԱՄՆ-ին, իսկ այնտեղ նրան կդատեն գաղտնի տեղեկությունների հրապարակման համար:

Շվեդիայի ԱԳՆ-ն առայժմ չի մեկնաբանում Բիլդտի «մերկացման» հետ կապված նյութը եւ սպասում է WikiLeaks-ի փաստաթղթերի հրապարակմանը: Կառլ Բիլդտը 1991-1994 թթ. գլխավորել է Շվեդիայի կառավարությունը, իսկ արտգործնախարարի պաշտոնն զբաղեցնում է 2006-ից:

# Դամասկոսում «տեղյակ չէին», որ սպանված լրագրողները Հոմսում են

Երեկ «**Ազգը**» գրեց Սիրիայի Հոմս քաղաքում օտարերկրյա երկու լրագրողների զոհվելու մասին: Մեկը բրիտանական «Թայմս» թերթի լրագրողուհի Մերի Քոլվինն է, մյուսը՝ ֆրանսիացի ֆոտոլրագրող Ռեմի Օշլիկը: Վերջին տեղեկությունների համաձայն, ԶԼՄ-ների ներկայացուցիչների շենքն արկակոծվել է, իսկ երբ լրագրողներն իջել են փողոց, նրանց կողքին հրթիռ է պայթել:

Սիրիայի տեղեկատվության նախարար Ադնան Մահմուդը երկու լրագրողների մահվան հանգամանքները մեկնաբանելիս նշել է, որ իշխանությունները «տեղյակ չէին» Հոմսում օտարերկրացի լրագրողների ներկայության մասին: SANA գործակալությունը մեջբերում է Մահմուդի այն խոսքերը, որ Դամասկոսում նույնիսկ չեն իմացել, որ երկու լրագրողները մտել են Սիրիայի տարածք: Կառավարությունը Հոմսի իշխանություններից պահանջել է պարզել իրավիճակը եւ օտարերկրացիների գտնվելու վայրը:

Մահմուդն ավելացրել է, որ անօրինական կերպով Սիրիայի տարածք մտած օտարերկրացի լրագրողները պարտավոր են դիմել իշխանություններին եւ կանոնավորել իրենց կարգավիճակը:

ՊԱՏՐԱ՞ՆՔ, ԹԵ՞ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

# Իսրայելը հազիվ թե հարձակվի Իրանի վրա

*1-ին էջից*

Արեւմտյան մի շարք երկրներ Դամասկոսից հետ են կանչում իրենց դեսպաններին, Արաբական լիգայի երկրները աստիճանաբար դադարեցնում են թռիչքները Սիրիա, որպես տարանցիկ երկիր Իրաքի տարածքն օգտագործելու գնով Թուրքիան հրաժարվում է Սիրիայի հետ ապրանքափոխանակությունից: Այդ ընթացքում ԱՄՆ պետքարտուղարության խոսնակ Վիկտորիա Նյուլանդը Սիրիային ռազմական միջամտության անհրաժեշտությունն ընդգծելու համար, ի լուր աշխարհի հավանական է համարում այդ տարբերակը: Նրա հայտարարությունը խիստ սահմանափակելով վարչապետ Էրդողանի կառավարության խուսանավելու հնարավորությունները, փաստի առջեւ է կանգնեցնում տարածաշրջանային գերտերության հավակնություններով Սիրիայում ընթացող քաղաքական զարգացումներին առանց այդ էլ Արեւմուտքի դիրքերից ակտիվորեն միջամտող Թուրքիային:

Կհաջողվի՞ թուրքական կառավարությանը սահմանափակել այս միջամտությունը քաղաքական շրջանակներում եւ խուսափել ռազմականից, ցույց կտա ժամանակը: Սակայն, ակնհայտ է, որ ռազմական միջամտությունից խուսափելու դեպքում Արեւմուտքի նշանառության թիրախ կդառնա Էրդողանի կառավարությունը, իսկ միջամտությանը դիմելու պարագայում վերջինը Ռուսաստանի եւ Չինաստանի թիրախը կդարձնի Թուրքիային, էլ չենք խոսում Իրանի մասին:

Հասկանալի է, որ Իրանի դեմ հարձակման պատասխանատվությունն էլ ստանձնել է Թուրքիայի հետ սուր տարաձայնություններ ունեցող Իսրայելը: Ընդ որում, նա, ի դեմս արտգործնախարար Ավիգդոր Լիբերմանի, ոչ միայն հարձակման անխուսափելիությունն է ընդգծում, այլեւ, նկատի ունենալով հարձակումից իրեն զերծ պահելու ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի ջանքերը, հայտարարում է. «Օտարերկրյա ճնշումները չեն ազդելու մեր որոշման վրա: Դա նրանց խնդիրը չէ: Իսրայելում քաղաքացիների անվտանգության, պետության ապագայի համար պատասխանատու է Իսրայելի կառավարությունը»:

Լիբերմանն այս հայտարարությունը Իսրայելի հեռուստատեսությամբ արել է փետրվարի 22-ին, իսկ երեկ Մոսկվայում էլ տարածվեց Ռուսաստանի արտգործնախարարության հայտարարությունը, թե Իրանի վրա Իսրայելի հնարավոր հարձակումը կատարյալ աղետ կլինի տարածաշրջանի եւ միջազգային ողջ համակարգի համար:

Հաշվի առնելով այն, որ 2003-ից ի վեր Իրանը ռազմական ներխուժման սպառնալիքի տակ է, նրա վրա մերթ ԱՄՆ-ն, մերթ Իսրայելը փորձում են հարձակվել, բայց չեն համարձակվում, ուստի Լիբերմանի հայտարարությունը պետք է համարել հարձակման «վճռականությամբ» տարածաշրջանի երկրներին ապակողմնորոշելու, ինչպես նաեւ Սիրիա-Իրանի առանցքի մոտալուտ քայքայման պատրանք ստեղծելու մարտավարության դրսեւորում:

Այլ կերպ, Իսրայելը Իրանի վրա չի հարձակվի, սակայն հարձակման վճռականությունը կարող է որպես միջոց օգտագործել Իրանին կաշկանդելու եւ նրա՝ Սիրիային աջակցելու հնարավորությունները սահմանափակելու, դա որպես ճնշման հավելյալ լծակ պաշտոնական Դամասկոսի դեմ օգտագործելու, ինչպես Սիրիայի բնակչության շրջանում, այնպես էլ տարածաշրջանի երկրներում նախագահ Բաշար Ասադի վարչակարգի դատապարտվածության տպավորություն ստեղծելու եւ այդ վարչակարգին աջակիցներից մեկուսացնելու համար:

Եթե Ռուսաստանի արտգործնախարարությունը չունի Իրանի վրա Իսրայելի հարձակման հավանականությունը հաստատող փաստարկներ, ուրեմն այդ հարձակումն ի լուր աշխարհի դիտարկելով որպես աղետ տարածաշրջանի ու միջազգային համակարգի համար, փաստորեն տուրք է տալիս իսրայելական նկրտումներին: Նա միաժամանակ ուժեղացնում է իսրայելական պատրանքն ու տպավորությունը, թերեւս դրանով էլ ճանապարհ է հարթում Իսրայելի՝ տարածաշրջանի երկրներին ապակողմնորոշելու մարտավարության համար:

# «Թալիբանը» ՆԱՏՕ-ին պատժելու կոչ է անում

«Թալիբան» շարժումը աֆղաններին կոչ է արել հարձակվել Արեւմուտքի ռազմակայանների վրա, դրանով իսկ վրեժ լուծելով ՆԱՏՕ-ի զինվորների կողմից Ղուրանի մի քանի օրինակների այրման համար: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:

Բացի դրանից, թալիբները համերկրացիներից պահանջել են սպանել, ծեծել եւ գերի վերցնել «զավթիչներին», նրանց «դաս տալ», որպեսզի «այլեւս չհամարձակվեն պղծել սուրբ Ղուրանը»:

Ղուրանը եւ մահմեդականների սրբազան այլ տեքստեր հրկիզվել էին փետրվարի 20-ին: «Բագրամ» ռազմակայանի զինվորները գրքերն առգրավել էին ձերբակալված աֆղաններից եւ այրել իբր դրանց «ծայրահեղական բնույթի» պատճառով:

Հաջորդ օրը կոալիցիոն ուժերի հրամանատար, գեներալ Ջոն Ալլենը ներողություն խնդրեց զինծառայողների վարքագծի համար, բայց ավելի քան երկու հազար զայրացած աֆղաններ «Բագրամ» ռազմակայանի մոտ բողոքի ցույց արեցին եւ հրկիզախառնուրդով լի շշեր նետեցին: Զինծառայողները ի պատասխան ռետինե գնդակներով կրակ բացեցին ցուցարարների վրա: Մեկ ուրիշ ցույց տեղի ունեցավ Քաբուլում ՆԱՏՕ-ի ռազմակայանի մոտ:

# Ճապոնացիները ցունամիից կպաշտպանվեն «տապաններով»

Ճապոնիայի ծովափնյա շրջաններում հատուկ «տապաններ» կտեղադրվեն բնակչությանը ցունամիի հարվածից պաշտպանելու նպատակով: Այդ մասին երեկ հաղորդել է երկրի պետական հողերի, ենթակառույցի եւ տրանսպորտի նախարարը:

Անցյալ տարվա մարտին Ճապոնիայի հյուսիս-արեւելքում 9 մագնիտուդանոց երկրաշարժից հետո ծովափնյա շրջանների բազմաթիվ բնակիչներ չհասցրին փրկվել ցունամիից: Այդ պատճառով իշխանությունները լրացուցիչ միջոցներ են ձեռնարկում, որոնցից մեկը հատուկ նավերի՝ «տապանների ստեղծումն է: Այդ մասին հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը:

Փրկարարական հատուկ նավերում կտեղավորվի 20-50 մարդ: «Տապաններում» կլինեն պարենի պաշար եւ այլ անհրաժեշտ իրեր:

«Տապանները» կտեղադրվեն դպրոցների եւ ծերանոցների շրջաններում: Ցունամիի նախազգուշացում ստանալով՝ մարդիկ կկարողանան մտնել փրկարարական նավ եւ այնտեղ անցկացնել մի քանի օր: «Տապանները» դիմանում են ջրում զանազան բեկորների հետ բախումներին:

ԱԶԳ

Մշակույթ

# Համազգայինի համազգային հարցը

*Մարդն այսօր գնում է թատրոն, որպեսզի մարդ մնա:*

***Ռոբեր Լեպաժ,***
*կանադացի ռեժիսոր*

Այսօր ընդունված է քննադատել մեր հասարակության բարոյական նկարագիրը: «Օ՜ ժամանակներ, օ՜ բարքեր»՝ ահա գերիշխող լեյտմոտիվը: Քննադատությունը շատ է, իսկ առաջարկվող դեղատոմսերը՝ քիչ: Սակայն, ըստ երեւույթին, հեծանիվ հորինելու կարիք չկա: Հասարակության բարոյական նկարագրի վերափոխման գործում գլխավոր դերը պատկանում է մշակույթին եւ հատկապես՝ թատրոնին: Թատրոնի մաքրագործող դերի մասին գիտեին նույնիսկ հին Հունաստանում: Հետեւաբար, եթե տվյալ հասարակությունը սիրում է թատրոն, ուրեմն այն բարոյապես կարող է դիմակայել կյանքի մարտահրավերներին:

Ուրախությամբ պիտի նշեմ, որ վերջին տարիներին վերականգնվել է մեր հասարակության սերը թատրոնի նկատմամբ: Մեր լավագույն թատրոնների ներկայացումները ունեն մշտական հանդիսատես: Սակայն հանդիսատեսի առկայությունը միայն բավարար չէ: Հարկավոր է, որպեսզի այդ հասարակությունը ներկայացնող պետությունը նույնպես իր հայացքը ուղղի դեպի թատրոնը, գիտակցի թատրոնի յուրահատուկ, անփոխարինելի դերը հասարակական բարոյականության ամրապնդման գործում եւ անհրաժեշտ աջակցություն ցուցաբերի թատրոնին:

Պետության համար մշակույթը ոչ պակաս ռազմավարական նշանակություն ունի, քան, ասենք, գյուղատնտեսությունը կամ բանակը: Մեր լավագույն թատրոններից մեկի՝ Համազգային պետական թատրոնի շուրջ ստեղծված իրավիճակը լակմուսի թղթի պես ցույց է տալիս, թե ինչպիսին է պետության վերաբերմունքը թատրոնի նկատմամբ: Թե հանդիսատեսը եւ թե մասնագիտական շրջանակները միահամուռ են այն հարցում, որ Համազգայինը մեր լավագույն թատերական կոլեկտիվներից մեկն է: Իր գոյության 20 տարիների ընթացքում թատրոնը հանդես է եկել բազմաթիվ պրեմիերաներով, որոնք արժանացել են հանդիսատեսի եւ քննադատների ամենաբարձր գնահատականներին: Թատրոնում բեմականացվել է թե դասական եւ թե ժամանակակից հայկական եւ արտասահմանյան դրամատուրգիան, իսկ առաջիկայում պատրաստվում են նոր, հետաքրքիր պրեմիերաներ: Սակայն, այս ամենով հանդերձ, թատրոնը դեռեւս շենք չունի: 2003 թվականից Համազգայինը դարձել է պետական թատրոն, այսինքն, կարելի է ասել, որ պետությունը պատասխանատվություն է ստանձնել թատրոնի համար: Սակայն սեփական շենքի խնդիրը մնում է չլուծված: Թատրոնի այսօրվա հաջողությունների հիմքը նրա ղեկավարի՝ Սոս Սարգսյանի քառասնամյա մաքառումների արդյունքն է, սակայն վարպետը մտավախություն ունի, որ առանց սեփական շենքի թատրոնը ապագա չունի: Սոս Սարգսյանը արդեն հոգնել է տարբեր պաշտոնյաների դռներ թակելով, տարբեր տարածքներ մատնացույց անելով, որտեղ հնարավոր է կառուցել թատրոնի շենքը: Կան նաեւ մասնավոր անձինք, ովքեր պատրաստ են աջակցել շենքի կառուցման գործում, սակայն սայլը տեղից չի շարժվում: Հաշվի առնելով Սոս Սարգսյանի մեծ վաստակը հայկական թատրոնի եւ կինոյի պատմության մեջ, պետությունը պետք է որ գտնի անհրաժեշտ հնարավորությունները այս խնդիրը լուծելու համար: Զիջելով մեր մշակույթի մեծերին, մենք ինքներս մեզ չենք հարգում: Պետությունն ինքը պետք է օրինակ ծառայի հասարակության համար այս հարցում: Պետք է հաշվի առնենք նաեւ, որ այս խնդիրը պետության համար շատ մեծ ֆինանսական բեռ չէ եւ մեկ տարվա բյուջեի վրա չի ծանրանում: Շենքի շինարարության համար կպահանջվի առնվազն 4-5 տարի եւ ֆինանսական բեռն էլ կբաշխվի համապատասխանաբար:

Որքան էլ որ պատկան մարմինները բերեն հիմնավոր փաստարկներ, այնուամենայնիվ մտահոգվելու առիթ կա: Չէ՞ որ մեր քաղաքում միշտ էլ տեղ գտնվում է սուպերմարկետների եւ առեւտրային նշանակության այլ օբյեկտների համար, իսկ թատրոնի համար այդպես էլ տեղ չի գտնվում: Մնջախաղի պետական թատրոնի շենքի հարցը վերջապես լուծվեց: Մնաց Համազգայինի շենքի հարցը: Այս մի շենքային հարցն էլ լուծելով պետությունը, կարելի է ասել, կավարտի իր «գույքային պարտավորությունների» խնդիրը հայ բեմարվեստի նկատմամբ:

Սոս Սարգսյանը եւ իր կոլեկտիվը դեռեւս հույսը չեն կորցրել եւ հավատում են, որ մեր պատկան մարմինները կկիսեն հասարակության սերը Համազգայինի նկատմամբ եւ թատրոնը վերջապես կունենա իր մշտական հանգրվանը:

**ՍԵՎԱԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

# Բանաստեղծ Արտեմ Յարութիւնեանի հեղինակային երեկոն

Գլենդել. Գրական երեկոները դառնում են յաճախակի. գրաւում են հասարակութեան մի բնորոշ հատուածի, մշակութային արժէքներով հմայուած, գրականութեամբ հետաքրքրուած ներկայանալի մի ամբողջութեան, որ ոգեւորւում է ոչ միայն աւանդական արժէքներով, այլեւ աւելի արդիական ճաշակով ու արժեչափով. դա արդէն յուսալի է դառնում: 2012 փետրուարի 18-ի երեկոյեան, Գլենդելի երիտասարդական կենտրոնում տեղի ունեցաւ գրական երեկոյ, նախաձեռնութեամբ Կալիֆոռնիայի Հայ գրողների միութեան (ԿՀԳՄ) եւ Համազգային մշակութային միութեան Գլենդելի մասնաճիւղի, յատկացուած հանրածանօթ բանաստեղծ, Երեւանի պետական համալսարանի դասախօս, պրոֆ. Արտեմ Յարութիւնեանին:

Երեկոն մեկնարկում է ԿՀԳՄ նախագահ, բանաստեղծ Գրիշ Դաւթեանը, որը գրական ակնարկով գնահատում է Արտեմ Յարութիւնեանի գրականութիւնը: Հեղինակի գրական արժեւորման խօսք է ասում Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի համալսարանի հայագիտական Նարեկացի ամբիոնի վարիչ պրոֆ Պիտեր Կաուին: Վաստակաւոր դերասանուհի Շաքէ Թուխմանեանը ընթերցում է Ա. Յարութիւնեանի ստեղծագործութիւնները: Ապա հեղինակն է կարդում իր ստեղծագործութիւններից: Հրապարակագիր Օֆելիա Հովեանը գնահատական խօսքով անդրադառնում է Ա. Յարութիւնեանի ստեղծագործական վաստակին, նրա անհատականութեանը:



Մեներգով հանդես են գալիս շնորհալի երգիչ Անահիտ Ներսիսեանը, Վարսենիկ Ներսիսեանը: Յայտնի ջութակահար Մերուժան Մարգարեանը հնչեցնում է իր ջութակը:

Օրերս բանաստեղծ Արտեմ Յարութիւնեանը զբաղուած է պատմական մի պոեմի ստեղծագործութեամբ, նուիրուած Հայաստանի Հանրապետութեան հիմնադիր Արամ Մանուկեանի յիշատակին: Այդ մասին յայտնելով՝ հեղինակը ընթերցում է հատուածներ պոեմից, որոնք ունկնդրւում են ծափողջյուններով:

# Հոբելյանական երեկո նվիրված կոմպոզիտոր Էդ. Միրզոյանին

Շաբաթ, 18 փետրվար 2012-ին, Բոստոնի մոտ գտնվող Արլինգթըն քաղաքում կայացավ կոմպոզիտոր Էդուարդ Միրզոյանի հոբելյանական երեկոն՝ կազմակերպությամբ Ամարաս արվեստի միության եւ մասնակցությամբ շրջանիս հայ երաժիշտների: Այս երեկոն մեր օրվա խոսողների եւ կատարողների միացյալ աշխատանքի արդյունքն էր՝ նուիրված մեծ հային: Ձեռնարկը տեղի ունեցավ Հայ մշակութային հիմնարկի կենտրոնում:

**ՌՈՒԶԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**ՆՈՐ ԲԱՌԱՐԱՆ**

# «Առավել գործածական բառերի գերմաներեն-հայերեն բառարանի» շնորհանդեսը ԵՊԼՀ-ում

Այսօր, ժ. 13.00, ԵՊԼՀ գրադարանի 3-րդ հարկի դահլիճում (Թումանյան 42) տեղի կունենա Երեւանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի գերմաներենի ամբիոնի դասախոսներ՝ Մանուշակ Հարությունյանի եւ Հայկանուշ Բարսեղյանի համատեղ ջանքերով կազմած եւ լույսընծայած «Առավել գործածական բառերի գերմաներեն-հայերեն բառարանի» շնորհանդեսը:




Բացման խոսքերով հանդես կգան ԵՊԼՀ ռեկտոր պրոֆ. Ս. Զոլյանը, բառարանի համահեղինակ Հ. Բարսեղյանը: Շնորհանդեսի հյուրերն են՝ ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպան Հանս-Յոխեն Շմիդտը, Երեւանում Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայության գրասենյակի ղեկավար տկն. Թինե Լաուֆերը, հյուպատոսներ, ՀՀ-ում տարբեր գերմանական կազմակերպությունների ներկայացուցիչներ, մասնագետներ, տարբեր համալսարանականներ եւ ուսանողներ:

**Երեւանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի արարողակարգի, դատախազների ստաասարկման եւ կազմակերպամեթոդական վարչության առաջին կարգի մասնագետի թափուր պաշտոնի զբաղեցման համար անցկացվող բաց մրցույթի**

**/Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմ/**

***ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.***

Վարչության փաստաթղթային սպասարկման, փաստաթղթաշրջանառության վարման աշխատանքների իրականացում, գործավարության իրականացման արդյունքում ստացված տեղեկատվության ամբողջականության, հավաստիության, գաղտնիության ապահովում, իր լիազորությունների շրջանակներում առաջարկությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, զեկուցագրերի եւ այլ գրությունների նախապատրաստում, համակարգչային մուտքագրման եւ ելքագրման աշխատանքների իրականացում, ինչպես նաեւ օրենքով, իրավական այլ ակտերով սահմանված այլ լիազորությունների իրականացում:

***ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման վերաբերյալ ներկայացվող պահանջները.***

1) առնվազն միջնակարգ կրթություն, 2) իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, 3) անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում, 4) համակարգչով եւ ժամանակակից տեխնիկական այլ միջոցներով աշխատելու ունակություն, 5) անհրաժեշտ (պարտադիր կառավարչական հմտությունների եւ ունակությունների, ինչպես նաեւ պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների եւ ունակությունների տիրապետում:

***Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է «12» մարտի 2012թ. :***

***Մրցույթն անցկացվելու է 2012թ. մարտի 26-ին ժամը «11:00»-ին ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5/ :***

***Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացվում են ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5, հեռախոս 511-627/ :***

23.02.2012թ.

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի ընդհանուր բաժնի առաջին կարգի մասնագետների թափուր պաշտոնի զբաղեցման համար անցկացվող բաց մրցույթի**

**/Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմ/**

***ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.***

գլխավոր դատախազության ոչ գաղտնի փաստաթղթային սպասարկման իրականացման եւ գլխավոր դատախազությունում գործավարության միասնական կարգի իրականացման ապահովում, գլխավոր դատախազությունում ստացված փաստաթղթերի մուտքագրման եւ դրանց առաքման աշխատանքների կատարման ապահովում, գլխավոր դատախազի, նրա տեղակալների, աշխատակազմի ղեկավարի հրամանների, կարգադրությունների ու ցուցումների հաշվառման եւ դրանց առաքման աշխատանքների կատարման ապահովում, բաժնում ստացված պաշտոնական գրությունների եւ քաղաքացիների առաջարկությունների, դիմումների ու բողոքների շարժի, վիճակագրական քարտերի վարման աշխատանքների կատարման ապահովում, գլխավոր դատախազի, նրա տեղակալների կողմից հսկողության վերցված փաստաթղթերի հաշվառման եւ հսկողական քարտերի լրացման աշխատանքների կատարման ապահովում, ինչպես նաեւ օրենքով, իրավական այլ ակտերով սահմանված այլ լիազորությունների իրականացում:

***ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման վերաբերյալ ներկայացվող պահանջները.***

1) առնվազն միջնակարգ կրթություն, 2) իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, 3) անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում, 4) համակարգչով եւ ժամանակակից տեխնիկական այլ միջոցներով աշխատելու ունակություն, 5) անհրաժեշտ (պարտադիր կառավարչական հմտությունների եւ ունակությունների, ինչպես նաեւ պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների եւ ունակությունների տիրապետում:

***Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է «12» մարտի 2012թ. :***

***Մրցույթն անցկացվելու է 2012թ. մարտի 26-ին ժամը «11:00»-ին ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5/ :***

***Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացվում են ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5, հեռախոս 511-627/ :***

23.02.2012թ.

# Հայ դյուցազունների նվաճումներն իրենց արժանի տեղը գտան «Դյուցազնագրքում»




Երեկ «Մուլտի գրուպ» կոնցեռնի մասնաշենքում տեղի ունեցավ «Գագիկ Ծառուկյան» բարեգործական հիմնադրամի մեկենասությամբ «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում 1000 օրինակ տպաքանակով տպագրված, Վարդան Թովմասյանի հեղինակած «Դյուցազնագրքի» շնորհանդեսը: Այն իր մեջ ներառում է վերջին 20 տարիների ընթացքում հայ 65 դյուցազունների գրանցած 134 ռեկորդները: Ընդ որում, 9 դյուցազունների 12 ռեկորդներ գրանցված են Գինեսի ռեկորդների գրքում: Գրքի հերոսները արտասովոր ունակություններով օժտված, ինքնակատարելագործման անսահմանությունն ապացուցելու եւ նորանոր նվաճումներ սահմանելու ձգտմամբ տոգորված դյուցազուն հայորդիներ են՝ հաղթելու ու հրաշքներ գործելու համառ պատրաստակամությամբ:

«Դյուցազնագիրքը» հիմնադրվել է 1990-ի մարտին ՀՀ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական կոմիտեի նախաձեռնությամբ: «Դյուցազնագրքի» առաջին ռեկորդակիրը 7-ամյա երեւանցի Սեյրան Ֆարմանյանն էր: Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի 1-ին դասարանի աշակերտը մեկ ժամում 3124 անգամ կքանստեց՝ ներկաներից կորզելով բուռն ծափահարություններ ու հիացմունքի բացականչություններ: Ռեկորդի գրանցումը տեղի ունեցավ 1990-ի մարտի 23-ին:

Գրքի հեղինակ, «Արտասովոր ունակությունների տեր անձանց նվաճումների գրանցման» հանձնախմբի ղեկավար **Վարդան Թովմասյանը** շնորհանդեսի սկզբում իր խորին շնորհակալությունը հայտնեց ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանին «Դյուցազնագրքի» հրատարակմանը աջակցելու համար: Նա նշեց, որ նման գիրք հրատարակելը վաղեմի երազանք է եղել եւ այսօր վերջապես այն իրականություն է դարձել:

Ըստ Վարդան Թովմասյանի, Գինեսի ռեկորդների գրքի օրինակով մեր «Դյուցազնագիրքն» առաջինն է աշխարհում: Նա Գագիկ Ծառուկյանին հանձնեց առաջին դյուցազնի հավաստագիր եւ հուշանվեր: Գրքի խմբագիր **Ալբերտ Իսոյանն** էլ ՀԱՕԿ-ի նախագահին հանձնեց իր հեղինակած «Սեւ գիրք» ժողովածուն, ինչպես նաեւ «Հայագիտակ» հրատարակչության «քարե» կազմով հրատարակած «Աստվածաշունչը»:

**Գագիկ Ծառուկյանն** իր շնորհակալությունը հայտնեց նվերների համար: Նա պատրաստակամություն հայտնեց հետագայում էլ աջակցել նման ձեռնարկումներին, օժանդակել դյուցազուններին ռեկորդների գրանցման համար կազմակերպվելիք միջոցառումների անցկացմանը, օգնել նրանց ֆինանսապես, խրախուսել ամեն կերպ: Գագիկ Ծառուկյանը Գինեսի ռեկորդների գրքի գրասենյակից ստացված հավաստագիրը հանձնեց Բենիկ Իսրայելյանին: Առաջիկայում ստացվում է նաեւ Դավիթ Ֆահրադյանի սահմանած Գինեսի 5-րդ ռեկորդի հավաստագրի ստացումը:

Վարդան Թովմասյանը տեղեկացրեց, որ «Դյուցազնագրքի» հրատարակումից հետո արդեն 3 նոր ռեկորդ է գրանցվել: Նախատեսվում է հետագայում գիրքը վերահրատարակել ու նոր նվաճումները գրանցել «Դյուցազնագրքում»: Շուտով կստեղծվի «Դյուցազնագրքի» հիմնադրամը: Գագիկ Ծառուկյանը խոստացավ 4 մլն դրամ փոխանցել հիմնադրամի հաշվեհամարին: Ըստ նրա, 1 մլն դրամը հարկ է հատկացնել գրքի հեղինակին, իսկ մնացած 3 մլն-ը օգտագործել դյուցազուններին պարգեւատրելու, նրանց աջակցելու համար:

# «Նայքի» նոր մարզակոշիկները կնպաստեն արագության զարգացմանը



Նյու Յորքում հանրահայտ «Նայք» ֆիրման ներկայացրել է իր նոր արտադրանքը: Ամենաժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ արտադրված նոր մարզական հանդերձանքը պետք է օգնի մարզիկներին ավելի բարձր արդյունքների հասնել:

Նոր արտադրանքի շնորհանդեսին մասնակցել են «Նայք» ֆիրմայի նախագահ Մարկ Պարկերը, լեգենդար թեթեւատլետ Կարլ Լյուիսը, բասկետբոլիստներ Դերոն Ուիլյամսը, 100 մ արագավազքի աշխարհի չեմպիոնուհի եւ ռեկորդակրուհի Կարմելիտա Ջեթերը, աշխարհի փոխչեմպիոն, թեթեւատլետ Ուոլթեր Դիքսը, աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոնուհի Անաստասիա Կապաչինսկայան եւ արգելավազքի Եվրոպայի չեմպիոն Սերգեյ Շուբենկովը: Հատկապես ուշադրության արժանացան թեթեւատլետների համար նախատեսված նոր մարզակոշիկները: Դրանք շատ թեթեւ են, գործնականում անկար, ոտքին «նստում» են այնպես, կարծես 2-րդ մաշկը լինեն: Այդ մարզակոշիկները կօգնեն վազորդներին ավելի արագ հաղթահարելու մրցատարածությունը:

## Հանգուցալուծումը՝ խաղավերջում

Չեմպիոնների լիգայի 1/8 եզրափակիչի հերթական երկու հանդիպումներն էլ անցան համառ պայքարում: Երկուսում էլ հանգուցալուծումը տեղի ունեցավ խաղավերջում: Ֆրանսիական «Մարսելը» սեփական հարկի տակ «Ինտերի» հետ խաղում միայն ավելացված ժամանակի 3-րդ րոպեին կարողացավ խփել միակ հաղթական գնդակը, որի հեղինակը Անդրե Այուն էր: «Բազելի» ֆուտբոլիստներին էլ «Բավարիայի» դարպասը հաջողվեց գրավել խաղավարտից 4 րոպե առաջ: Աչքի ընկավ Շտոկերը, որի խփած միակ գոլը հաղթանակ պարգեւեց շվեյցարացիներին:

Եվրոպայի լիգայի մրցաշարում հայտնի դարձավ 1/8 եզրափակիչի առաջին մասնակիցը: Հաջորդ փուլի ուղեգիր նվաճեց անգլիական «Մանչեսթր Սիթին», որը պատասխան խաղում սեփական հարկի տակ 4-0 հաշվով ջախջախեց պորտուգալական «Պորտոյին»: Առաջին խաղում էլ անգլիական ակումբը հաղթել էր 2-1 հաշվով:

## Հայաստանը կներկայացնեն 5 շախմատիստուհիներ

Մարտի 1-ին Թուրքիայի Գազիանթեփ քաղաքում կմեկնարկի շախմատի կանանց Եվրոպայի անհատական առաջնությունը: Հայաստանն այդ մրցումներին կներկայացնեն գրոսմայստերներ Էլինա Դանիելյանը, Լիլիթ Մկրտչյանը, Լիլիթ Գալոյանը, Մարիա Կուրսովան եւ միջազգային վարպետ Աննա Հայրապետյանը:

ԴԱՀՈՒԿԱՎԱԶՔ

## Սերգեյ Միքայելյանի աննախադեպ հաջողությունը

**Թուրքիայի Էրզրում քաղաքում ընթացող դահուկավազքի աշխարհի երիտասարդական առաջնությունում աննախադեպ հաջողության հասավ 20-ամյա Սերգեյ Միքայելյանը: 10 կմ դասական ոճով դահուկավազքում հայ դահուկորդը 26 րոպե 35,4 վրկ արդյունքով գրավեց 8-րդ տեղը: Նա հաղթողից՝ ռուսաստանցի Սերգեյ Ուստյուգովից հետ մնաց ընդամենը 1 րոպե 10,7 վրկ-ով: Նշենք, որ Սերգեյն անձնական ռեկորդ սահմանեց: Նախորդ լավագույն ցուցանիշը այս ոճում նա ցույց էր տվել 2010-ին՝ գրավելով 48-րդ տեղը, առաջատարին զիջելով 2 րոպե 27,9 վրկ-ով:**

**Մինչ այս հաջողությունը Սերգեյ Միքայելյանը, որին մրցավայր են ուղեկցել ծնողները՝ նախկին դահուկորդներ Արթուր եւ Ալլա Միքայելյանները, 1500 մ դահուկավազքում 92 մասնակիցների մեջ գրավել էր 42-րդ տեղը:**

**Այսօր Սերգեյ Միքայելյանը կրկին ասպարեզ դուրս կգա՝ մասնակցելու 20 կմ կոմբինացված դահուկավազքին: Հիշեցնենք, որ անցյալ տարի Էստոնիայում կայացած դահուկավազքի աշխարհի երիտասարդական առաջնությունում Սերգեյ Միքայելյանը 126 մասնակիցների մեջ գրավել էր 27-րդ տեղը:**

## Գայանե Հարությունյանն առաջադիմել է

**Ձյուդոյի միջազգային ֆեդերացիան հրապարակել է ձյուդոիստների դասակարգման հերթական ցուցակները: Դյուսելդորֆի Գրան պրիում ունեցած հաջող մրցելույթների շնորհիվ 48 կգ քաշային Գայանե Հարությունյանը 8 հորիզոնականով բարձրացել է եւ այժմ 176 միավորով զբաղեցնում է 38-րդ տեղը: Ժաննա Ստանկեւիչը 57 կգ քաշայինների ցանկում 120 միավորով 50-րդ տեղում է:**

**Տղամարդկանց դասակարգման ցուցակում մեր առաջատար ձյուդոիստները բարձր տեղեր են զբաղեցնում: Արմեն Նազարյանը մինչեւ 66 կգ քաշայինների ցանկում 16-րդ տեղում է, իսկ Հովհաննես Դավթյանը (60 կգ)՝ 17-րդ: Փետրվարի 25-26-ին մեր ձյուդոիստները կմասնակցեն Պրահայում եւ Վարշավայում անցկացվելիք տղամարդկանց եւ կանանց աշխարհի գավաթի խաղարկության հերթական փուլին:**

## «Միկան» փորձարկում է լեգեոնականների

**Ինչպես տեղեկացանք «Միկա» ակումբից, Կիպրոսում ուսումնամարզական հավաք անցկացնող թիմի կազմում փորձաշրջան են անցնում պորտուգալացի Անդրե Կաբես Պորտուզելը եւ Կաբո Վերդեի ներկայացուցիչ Մոհամադի Տրավալեն: Վերջինս սերբական «Սլոբոդայի» հետ ստուգողական խաղում ձգել է մկանը ու առաջիկայում չի կարող մարզվել: Իսկ ահա Պորտուզելը կշարունակի փորձաշրջանը թիմում:**

**25-ամյա կիսապաշտպան Պորտուզելը նախկինում հանդես է եկել պորտուգալական «Օդիվերաշ», Մալթայի «Սլիեմա», հունգարական «Ռակոցի» թիմերում:**

**«Միկան» ստուգողական հաջորդ հանդիպումը կանցկացնի վաղը՝ մրցելով ռուսական «Տեքստիլչիկի» հետ:**

## Ջոկովիչի ապահովագրական արժեքը 100 մլն դոլար է



**Աշխարհահռչակ Lloyd's ապահովագրական ընկերությունը հայտարարել է, որ թենիսիստների համաշխարհային դասակարգման ցուցակի առաջատար, սերբ Նովակ Ջոկովիչն արժե 100 մլն դոլար:**

**Թենիսիստի ապահովագրական արժեքը որոշելիս ընկերության աշխատակիցները հաշվի են առել հետեւյալը: Ջոկովիչը ներկայումս 24 տարեկան է, մինչեւ 33 տարեկանը նա բարձր մակարդակով հանդես կգա: Անցյալ տարի սերբ թենիսիստը 11 մլն դոլար էր վաստակել, ուստի իր կարիերայի մնացած 9 տարիներին նա մոտ 100 մլն դոլար կվաստակի:**

**Երկար տարիներ Lloyd's-ը ապահովագրում է ոչ միայն մարդկանց, այլեւ նույնիսկ նրանց մարմնի առանձին մասերը: Օրինակ, ընկերությունը 1 մլրդ դոլարով ապահովագրել է Մերայի Կերիի ոտքերը, Սելին Դիոնի ձայնալարերը, Ամերիկա Ֆեռերայի ժպիտը, Հոլի Մեդիսոնի կուրծքը եւ Ջենիֆեր Լոպեսի հետույքը:**

**Նշենք, որ Ջոկովիչը դեռ չի դիմել ապահովագրական ընկերությանը:**

## Խաղերի ժամանակացույցը հայտնի է

Հայտնի է դարձել ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականի ստուգողական հանդիպումների անցկացման ժամը: Փետրվարի 28-ին Լիմասոլի «Ցիրիոն» մարզադաշտում Սերբիայի հավաքականի հետ կայանալիք հանդիպումը կսկսվի Երեւանի ժամանակով ժամը 18-ին, իսկ հաջորդ օրը կայանալիք Հայաստան-Կանադա մրցախաղը կսկսվի ժամը 21-ին:

Սերբերի հետ հանդիպումը կսպասարկեն կիպրոսցի մրցավարները: Ի դեպ, Սերբիայի հավաքականը կազմի որոշ կորուստներ ունի: Վնասվածքների պատճառով ստուգողական հանդիպմանը չեն կարող մասնակցել փորձառու հարձակվողներ Նիկոլա Ժիգիչը եւ Մարկո Պանտելիչը, ինչպես նաեւ կենտրոնական պաշտպան Միլան Բիշեւացը:

Հիշեցնենք, որ ՀՀ ազգային հավաքականն ընդլայնված կազմով փետրվարի 26-ին կմեկնի Կիպրոս՝ նախապատրաստվելու այդ հանդիպումներին: Հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը վաղուց է Կիպրոսում: Նա մեկնել էր «Փյունիկի» հետ:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐ

## Հայաստանի Հանրապետություն

### Երևանի Մետրոպոլիտենի Վերականգնման Ծրագիր - Փուլ I

## ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐ

**ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՓԱԹԵԹ 6՝ ՄԵՏՐՈՅԻ 81-717 ՏԻՊԻ 6 ՎԱԳՈՆՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՄՈԴԵՌՆԻԶԱՑԻԱ**

Սույն Մրցույթի հրավերը հաջորդում է սույն ծրագրի Ընդհանուր Գնումների Ծանուցմանը, որը հրապարակվել է ՎԶԵԲ-ի «Գնումների Հնարավորություններ» կայքէջում՝ 2011թ.-ի դեկտեմբերի 9-ին:

«Կարեն Դեմիրճյանի անվան Երեւանի Մետրոպոլիտեն» ՓԲԸ (հետայսու՝ Գնորդ) նախատեսում է օգտագործել Վերակառուցման եւ Զարգացման Եվրոպական Բանկի (հետայսու՝ ՎԶԵԲ կամ Բանկ) միջոցների մի մասը, Եվրոպական Ներդրումային Բանկի (հետայսու՝ ԵՆԲ) վարկը եւ ԵՄ Հարեւանության Ներդրումային Գործիքից (հետայսու՝ ՀՆԳ) ստացված Դրամաշնորհը «Մետրոյի 81-717 տիպի 6 վագոնների կապիտալ վերանորոգման եւ մոդեռնիզացիայի» ծախսերը հոգալու համար, որը Երեւանի Մետրոպոլիտենի վերականգնման ընդհանուր ծրագրի (հետայսու՝ Ծրագիր) մաս է կազմում: Ծրագրի նպատակն է մետրոյի համակարգի վերականգնման հրատապ կարիքների բավարարումը, որը ներառում է տարբեր ապրանքների ու ծառայությունների ձեռքբերում:

Գնորդը այժմ հրավիրում է ընտրվելու իրավունք ունեցող Կապալառուներին ներկայացնել կնքված հայտեր՝ վարկային միջոցների մի մասից ֆինանսավորվող հետեւյալ պայմանագրի/երի կնքման համար.

**Մետրոյի 81-717 տիպի 6 վագոնների նախագծում,** արտադրություն, կապիտալ վերանորոգում, մոդեռնիզացիա, փորձարկում, մատակարարում եւ հարակից ծառայությունների տրամադրում

Նախատեսվում է, որ Կապալառուն կտեղափոխի Գործատուի առկա 6 մետրոյի վագոնները իր աշխատանքային արտադրամասեր՝ վերականգնման նպատակով: Կապալառուից կպահանջվի (ոչ լրիվ ցուցակ).

◆ Մետրոյի վագոնի թափքի ճակատային մասի կապիտալ վերանորոգում եւ մոդեռնիզացիա (վագոնի ճակատային մաս)

◆ Մեքենավարի խցիկի կապիտալ վերանորոգում եւ մոդեռնիզացիա

◆ Ուղեւորային սրահի կապիտալ վերանորոգում եւ մոդեռնիզացիա

◆ Ուղեւորային սրահի սահովի դռների մեխանիզմի կապիտալ վերանորոգում եւ մոդեռնիզացիա

◆ Լույսերի, հայելիների եւ երթուղու ցուցատախտակի կապիտալ վերանորոգում եւ մոդեռնիզացիա

◆ Այլ սարքերի եւ սարքավորումների տեղադրում

◆ Մետրոյի վագոնների թափքի ինտերիերի եւ էքստերիերի նոր ներկվածքի ապահովում

Պայմանագրի ավարտի համար նախատեսվող ժամանակահատվածը՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 8 ամիս:

Բանկի վարկային միջոցներից ֆինանսավորվող մրցույթները բաց են բոլոր երկրների ընկերությունների համար:

Պայմանագրի շնորհման որակավորում անցնելու համար մրցույթի մասնակիցները պետք է համապատասխանեն հետեւյալ նվազագույն չափանիշներին.

(i) այն դեպքում, երբ մրցույթի մասնակիցը ըստ Պայմանագրի առաջարկում է Ապրանքների մատակարարում, որոնք իր կողմից չեն թողարկվում կամ ինչ-որ կերպ չեն արտադրվում, այդ մասնակիցը պետք է պատշաճ կերպով լիազորված լինի Ապրանքների թողարկողի կամ արտադրողի կողմից՝ Գործատուի երկրում այդ Ապրանքների մատակարարման համար: Մրցույթի մասնակիցը պետք է ներկայացնի Արտադրողի Լիազորության Ձեւ (Հատոր I.v)՝ Ապրանքների եւ բոլոր հիմնական գնվելիք բաղադրիչների համար:

(ii) Պետք է ներկայացվեն աուդիտային հաշվեկշռի թերթիկները նախորդ երեք (3) տարիների համար կամ, իսկ եթե այն չի պահանջվում մրցույթի մասնակցի երկրի օրենսդրությամբ՝ Գործատուի համար ընդունելի ցանկացած այլ ֆինանսական հաշվետվություններ, որոնք կցուցադրեն մրցույթի մասնակիցների ֆինանսական վիճակի կայունությունը՝ արտացոլելով նրա երկարաժամկետ եկամտաբերությունը: Գործատուն անհրաժեշտության դեպքում հարցումներ կկատարի մրցույթի մասնակցի բանկիրներից:

(iii) Որպես առաջատար Կապալառու՝ միջին տարեկան շրջանառությունը (որը որոշվում է ավարտված կամ ընթացիկ պայմանագրերից՝ քաղվածքների հիման վրա) նախորդ երեք (3) տարիների ընթացքում պետք է լինի ոչ պակաս քան 2.5 միլիոն (երկու միլիոն հինգ հարյուր հազար) Եվրոյի համարժեք

(iv) Մրցույթի մասնակիցը պետք է ապացուցի, որ իրեն հասու են լիկվիդային միջոցներ, գրավով չծանրաբեռնված անշարժ գույք, վարկային գծեր եւ այլ ֆինանսական միջոցներ, որոնք բավարար են ապահովելու պայմանագրի իրականացման համար ֆինանսական միջոցների շարժը՝ հաշվարկված առաջարկվող լոտի արժեքի 80%-ին համարժեք Եվրոյով գումարից ոչ պակաս՝ հաշվի առնելով մրցույթի մասնակիցի պարտավորությունները այլ պայմանագրերի նկատմամբ.

(v) Որպես Գլխավոր Կապալառու, Կապալառու կամ Ենթակապալառու նախորդ հինգ (5) տարիների ընթացքում առնվազն երեք (3) պայմանագրերի հաջող իրականացման փորձ, որոնցից յուրաքանչյուրը առաջարկվող լոտի արժեքի առնվազն ութսուն (80) տոկոսի արժողությամբ, որոնք հաջողությամբ ավարտին են հասցվել եւ էապես համապատասխանել են պայմանագրի պահանջներին եւ որոնք համեմատելի են առաջարկվող պայմանագրի հետ: Մրցույթի մասնակիցը պետք է տրամադրի գնորդների անունները, հասցեները, պայմանագրային տվյալները եւ արժեքները:

(vi) Մրցույթի մասնակիցը պետք է ներկայացնի ընկերության Որակի Ապահովման/Որակի Վերահսկման հավաստագրերով հաստատված որակավորումների նկարագրությունը (օրինակ՝ վերջին ISO 9001 կամ խոշոր արտադրական սարքերի արտադրողների հավաստագրերի տարածաշրջանային համարժեքները, որոնք պետք է ուժի մեջ լինեն առնվազն մատակարարման ժամանակաշրջանում):

(vii) Մրցույթի մասնակիցը պետք է տրամադրի հավաստի տեղեկատվություն ցանկացած ընթացիկ կամ անցած դատական, կամ արբիտրաժային գործընթացների արդյունքների վերաբերյալ՝ իր ավարտված կամ ընթացիկ պայմանագրերի հետ կապված նախորդ երեք (3) տարիների համար: Մրցույթի մասնակցի կամ համատեղ ձեռնարկության որեւէ գործընկերոջ կողմից անցյալում պայմանագրերի ոչ բավարար իրականացման կամ նրա դեմ վճիռների շարունակական պատմությունը կարող է հանգեցնել մրցույթի մասնակցի հայտի մերժմանը:

(viii) Մրցույթի մասնակիցը պետք է ապացուցի, որ ի վիճակի է իրականացնել Օբյեկտների վերանորոգումը եւ տեխսպասարկումը Հայաստանում Թերությունների համար Պատասխանատվության Ժամանակաշրջանում, ի վիճակի է իրականացնել ծախսանյութերի եւ պահեստամասերի արագ մատակարարում Շինհրապարակ, եւ որ ի վիճակի է ապահովել Օբյեկտների վերանորոգման եւ տեխնիկական սպասարկման հնարավորությունը Հայաստանում Թերությունների համար Պատասխանատվության Ժամանակաշրջանից հետո նույնպես: Մրցույթի մասնակիցը պետք է ցույց տա, թե ինչպես են այս պարտավորությունները իրականացվելու պայմանագրի շնորհման դեպքում;

Եթե հայտը ներկայացված է գործընկերության հիմքով գործող կամ այլ ոչ կորպորատիվ ձեռնարկությունների ասոցիացիայի կողմից, որոնք իրենց գործունեությունը իրականացնում են համատեղ ձեռնարկության (այսուհետեւ «համատեղ ձեռնարկություն կամ կոնսորցիում») համաձայնագրի հիման վրա, ապա այսպիսի համատեղ ձեռնարկությունը կամ կոնսորցիումը պետք է բավարարի հետեւյալ որակավորման պահանջներին.

(a) Ձեռնարկության կամ կոնսորցիումի առաջատար անդամ ընկերությունը («ձեռնարկության կամ կոնսորցիումի պատասխանատու ընկերությունը») պետք է ունենա առնվազն երկու (2) պայմանագրերի իրականացման հիմնական կապալառուի փորձ, ըստ վերը սահմանված (v) որակավորման չափանիշի:

(b) Առաջատար անդամ ընկերությունը պետք է բավարարի վերը սահմանված որակավորման (iii) եւ (iv) չափանիշների վաթսուն (60) տոկոսից ոչ պակասը:

(c) Առաջատար անդամ ընկերությունը պետք է բավարարի վերոնշյալ (vi) որակավորման չափանիշը:

(d) Ձեռնարկության կամ կոնսորցիումի անդամ ընկերություններից առնվազն մեկը պետք է ունենա առնվազն մեկ (1) պայմանագրի իրականացման հիմնական կապալառուի, կապալառուի կամ ենթակապալառուի փորձ, որն առնչվի վերը սահմանված (v) որակավորման չափանիշին;

(e) Ձեռնարկության կամ կոնսորցիումի յուրաքանչյուր անդամ ընկերություն պետք է բավարարի վերը սահմանված (ii) եւ (vii) որակավորման չափանիշները, ավելին, յուրաքանչյուր անդամ ընկերություն պետք է բավարարի վերը սահմանված (iii) եւ (iv) որակավորման չափանիշների ոչ պակաս քան քսան (20) տոկոսը;

(f) Ձեռնարկությունը կամ կոնսորցիումը համատեղ կերպ պետք է բավարարեն (ii) (iii) (iv) (v) եւ (viii) որակավորման չափանիշները, ինչի նպատակով յուրաքանչյուր անդամ ընկերության համապատասխան թվերը գումարվելու են՝ ձեռնարկության կամ կոնսորցիումի ընդհանուր կարողության մասին պատկերացում ստանալու համար:

Մրցութային փաստաթղթերը կարելի է ձեռք բերել ստորեւ նշված հասցեում տեղակայված գրասենյակից՝ վճարելով 200 (երկու հարյուր) Եվրո կամ դրան համարժեք ՀՀ Դրամ, կամ այլ ազատ փոխարկելի արժույթով գումար, որը ենթակա չէ վերադարձման: Տարադրամի փոխանակման փոխարժեքը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի կողմից սահմանված վճարման օրվա տարադրամի փոխարժեքին:

Վճարումը կատարվում է բանկային փոխանցման միջոցով, իսկ մրցութային փաստաթղթերը տրամադրվում են Մրցույթի մասնակցի կողմից համապատասխան բանկային հաշիվներին գումարի փոխանցման ստացականը ներկայացնելուց կամ Գնորդի բանկի կողմից գումարի ստացման փաստը հաստատելուց հետո: Կանխիկ վճարումները արգելվում են:

| | |
|---|---|
| Թղթակից Բանկի Հաշիվ, Եվրո | Deutsche Bank AG, Ֆրանկֆուրտ, Գերմանիա SWIFT: DEUTDEFF |
| Շահառուի Բանկ, Եվրո | UNIBANK, Հայաստան, SWIFT: UNIJ AM 22 Հաշիվ: 9477282 |
| Շահառուի Հաշիվ, Եվրո | Հաշիվ No: 24104004285502 Անվանում: «Կարեն Դեմիրճյանի անվան Երեւանի մետրոպոլիտեն» |
| Վճարման մանրամասներ | Մրցութային փաստաթղթերի ստացման համար վճար |
| Շահառու Բանկ, ՀՀ դրամ | UNIBANK, Հայաստան, |
| Շահառուի հաշիվ, ՀՀ դրամ | Հաշիվ No: 24104004285500 Անվանում: «Կարեն Դեմիրճյանի անվան Երեւանի մետրոպոլիտեն» |

Չվերադարձվող գումարի վճարման պատշաճ հաստատումը ստանալուց հետո փաստաթղթերը արագորեն կուղարկվեն սուրհանդակային փոստով, սակայն ուղարկողը պատասխանատվություն չի կրում դրանց կորստի կամ ուշացմամբ առաքման համար: Պահանջի դեպքում փաստաթղթերը կարող են նաեւ ուղարկվել էլեկտրոնային տարբերակով՝ պայգա մրցույթի մասնակցի կողմից չվերադարձվող գումարի վճարման մասին համապատասխան հաստատումը ներկայացնելուց հետո: Տպագիր եւ էլեկտրոնային տարբերակների միջեւ անհամապատասխանությունների դեպքում տպագիր տարբերակը գերակայում է:

Շինհրապարակ այցելությունները տեղի կունենան **2012թ. մարտի 1-ին (հինգշաբթի) եւ մարտի 2-ին (ուրբաթ)** օրերը: Շինհրապարակում մրցույթի մասնակիցներից ակնկալվում է բոլոր գնումների եւ չափումների իրականացումը տվյալ այցելության ընթացքում, ինչը նրանց պետք է բավարարի այն առումով, որ բոլոր անհրաժեշտ քանակները ներառվեն մրցութային գների մեջ: Քանակների վերաչափումներ հետագայում չեն թույլատրվելու: Ակնկալվում է, որ Մրցույթի մասնակիցները պետք է լիարժեք պատկերացում ստանան Գործատուի առկա մետրոյի շարժակազմի ֆիզիկական վիճակի, տիպի եւ տարիքի մասին: **Ուստի շինհրապարակ այցելությունը համարվում է պարտադիր**: Մուտքի/ելքի վիզաները կարող են գնվել օդանավակայանում: Նրանք, ովքեր ցանկանում են ժամանել, անելու են դա իրենց սեփական միջոցներով:

Բոլոր մրցութային հայտերը պետք է ուղեկցվեն 50,000 (հիսուն հազար) Եվրո կամ դրան համարժեք այլ ազատ փոխարկելի տարադրամով «Կարեն Դեմիրճյանի անվան Երեւանի Մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի անունով տրված Բանկային երաշխիքով, ինչպես դա սահմանված է Հատոր I. Iv.-ում:

Մրցութային հայտերը պետք է առաքվեն ստորեւ նշված հասցեով ոչ ուշ քան **հինգշաբթի՝ 2012թ-ի ապրիլի 05-ը ժ. 15:00** (Երեւանի ժամանակով): Մրցութային հայտերը կբացվեն **հինգշաբթի՝ 2012թ-ի ապրիլի 05-ին, ժ. 16:00-ին** (Երեւանի ժամանակով) այն մասնակիցների ներկայությամբ, ովքեր կցանկանան ներկա գտնվել հայտերի բացմանը:

Մրցութային փաստաթղթեր ձեռք բերած մրցույթի հնարավոր մասնակիցների գրանցամատյանը կարող է տրամադրվել ստորեւ նշված հասցեում:

Մրցույթի պոտենցիալ մասնակիցները կարող են լրացուցիչ տեղեկատվություն ստանալ, ուսումնասիրել եւ ձեռք բերել մրցութային փաստաթղթերը հետեւյալ գրասենյակում.

*«Կարեն Դեմիրճյանի անվան Երեւանի Մետրոպոլիտեն» ՓԲԸ*
*Ծրագրի Իրականացման Խումբ (ԾԻԽ)*
*Բաղրամյան պ. 78*
*Երեւան 0033*
*Հայաստանի Հանրապետություն*

*Կոնտակտային անձ՝ պրն. Գարիկ Մանուկյան*
*Հեռ/ֆաքս. +374 10 27 30 81*
*Էլ. Փոստ. metro374@gmail.com*

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի թիվ 2 եւ թիվ 3 կայազորների զինվորական դատախազությունների տարածքային բաժինների առաջատար մասնագետների թափուր պաշտոնների զբաղեցման համար անցկացվող բաց մրցույթներ**

**/Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմ/**

***ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.***

Բաժնի փաստաթղթային սպասարկման, փաստաթղթաշրջանառության վարման աշխատանքների իրականացում, գործավարության իրականացման արդյունքում ստացված տեղեկատվության ամբողջականության, հավաստիության, գաղտնիության ապահովում, իր լիազորությունների շրջանակներում առաջարկությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, զեկուցագրերի եւ այլ գրությունների նախապատրաստում, համակարգչային մուտքագրման եւ ելքագրման աշխատանքների իրականացում, ինչպես նաեւ օրենքով, իրավական այլ ակտերով սահմանված այլ լիազորությունների իրականացում:

***ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման վերաբերյալ ներկայացվող պահանջները.***

1) առնվազն միջնակարգ կրթություն, 2) իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, 3) անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում, 4) համակարգչով եւ ժամանակակից տեխնիկական այլ միջոցներով աշխատելու ունակություն, 5) անհրաժեշտ (պարտադիր կառավարչական հմտությունների եւ ունակությունների, ինչպես նաեւ պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների եւ ունակությունների տիրապետում:

***Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է «12» մարտի 2012թ. :***

***Մրցույթն անցկացվելու է 2012թ. մարտի 26-ին ժամը «11:00»-ին ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5/ :***

***Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացվում են ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5, հեռախոս 511-627/ :***

23.02.2012թ.

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի Երեւան քաղաքի դատախազության տարածքային վարչության առաջին կարգի մասնագետի թափուր պաշտոնի զբաղեցման համար անցկացվող բաց մրցույթի**

**/Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմ/**

***ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.***

ա) դատախազության եւ վարչության փաստաթղթային սպասարկման իրականացում, փաստաթղթաշրջանառության վարման աշխատանքներ, վարչության առջեւ դրված գործառույթներից եւ խնդիրներից բխող իրավական ակտերի ու այլ փաստաթղթերի պահպանության եւ արխիվացման աշխատանքներ, դատախազությունից առաքվող փաստաթղթերի եւ գործերի գրանցման ու առաքման ապահովում, անհրաժեշտ նյութերի եւ տեղեկատվության նախապատրաստում, համակարգչային մուտքագրման եւ ելքագրման աշխատանքներ, ինչպես նաեւ օրենքով, իրավական այլ ակտերով սահմանված այլ լիազորությունների իրականացում:

***ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման վերաբերյալ ներկայացվող պահանջները.***

ա) միջին մասնագիտական կրթություն, բ) իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի նվազագույն իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, գ) նվազագույն գիտելիքներ իր սպասարկման բնագավառի մասին, դ) համակարգչով աշխատելու ունակություն, ե) գրական հայերենի պատշաճ իմացություն:

***Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է «12» մարտի 2012թ. :***

***Մրցույթն անցկացվելու է 2012թ. մարտի 26-ին ժամը «11:00»-ին ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5/ :***

***Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացվում են ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5, հեռախոս 511-627/ :***

23.02.2012թ.

## ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայողների համար «Հաշվապահական հաշվառում» դասընթացի անցկացման մրցույթ

ՀՀ ԿԱ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայողների համար «Հաշվապահական հաշվառում» թեմայով մեկամսյա դասընթացների անցկացման (ներառյալ վերապատրաստման նյութերի մշակումը) համար անհրաժեշտ որակավորում եւ փորձ ունեցող կազմակերպության ընտրության նպատակով:

Դասընթացի թեմաներն են՝

▼ Ֆինանսական եւ հարկային հաշվառումներ, հիմնական տարբերությունները,

▼ Հաշվապահական հաշվառման հիմնական ստանդարտները,

▼ Հետաձգված հարկային ակտիվներ եւ պարտավորություններ,

▼ Ֆինանսական հաշվետվությունները,

▼ Հաշվապահական հաշվառման հաշվային պլանը:

Հետաքրքրված կազմակերպությունները կարող են ստանալ հայտերի ներկայացման հրավերը՝ դիմելով Anahit–Hunanyan@taxservice.am էլեկտրոնային հասցեին, կամ ՀՀ ԿԱ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ին, ք.Երեւան, Ահարոնյան 12/3 սենյակ 101, կամ ք Երեւան, Խորենացի 7, հեռախոս **010-594-504**

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2012թ-ի մարտի 1-ը ներառյալ:

Հայտարարությունը տեղադրված է նաեւ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայք էջում՝ **www.taxservice.am հասցեով**:

## Կորել է

«Անգովր» ՍՊԸ Պետ. ռեգիստրի վկայականը, գրանցման
թիվ 282 110 05 180
18.03.2005 թվական
վկայականի N 03 Ա-067 888
իրավաբանական հասցե՝ Երեւան, փ. Ռոստոմյան, տ. 1

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 23.2.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: